№ 93 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 4 ՄԱՅԻՍԻ 1910 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 4 ՄԱՅԻՍԻ № 93

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով):

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Չորեքշաբթի, մայիսի 5-ին
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ
(Միքայէլեան փողոց, № 107)

ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ

Յօգուտ
Թիֆլիսի հայ չքաւոր երեխաներին օգնող «ԼՈՅՍ» ընկերութեան

1). Զբօսանքին տեղի կունենայ յայտնի գարմօնիստ ԲԱԽՇՕՎԻ համերգը:
2) Կուպլէտ. կարտասանէ Գ. Փիրումեան:
3) Մանկական խաղեր (մրցանակաբաշխութեամբ):
4) Սինեմատօգրաֆ:
5) Մանդօլինիստներ:
6) Պտի-շվօ:
7) Բաղդի անիւ:
8) Ավտոմատ հաւ:
9) Երաժշտական նուագախումբ:
10) Սազանդարներ:
11) Օղակների նետում:
12) «Տիկնիկ» հանելուկ:
13) Բուֆէտ և այլն:

ՊԱՐԵՐ

Զբօսանքի սկիզբը ցերեկվայ ժամը 3-ից:
Մուտքը հասակաւորների համար 25 կ., երեխաների և աշակերտների համար՝ 15 կոպէկ:
Մանուկներին մուտքի մօտ բաժանվում է ՁՐԻ զանազան պետութիւնների դրօշակներ:
Մանկական խաղերի սկիզբը ժամը 5-ից:
Անձրևային եղանակ լինելու դէպքում զբօսանքը կը յետաձգվի:
(ե. չ.) (ստ.) 503. 2—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Հինգշաբթի, մայիսի 6-ին, 1910 Թ.
XXV ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ XXV
Վրաց և Հայոց Դրամատիկական Ընկերութեան վարչութիւնը ի պատիւ 25-ամեայ բեմական գործունէութեան թէ վրաց և թէ հայոց արտիստ
ԳԵԴԵՈՆ ՄԻՐԱՂԵԱՆ-ԳԵԴԵՎԱՆՕՎԻ
կը ներկայացնէ

I
Վրաց լեզուով Մօլիէրի ՏԱՐՏԻՒՖ 4-դ արարուած ռեժիսեօր՝ Շատիրօվ
II
Հայերէն լեզուով Գ. Սունդուկեանի ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ 1-ին արարուած ռեժիս. տ. Օ. Մայսուրեան
III
Վրաց լեզուով Ա. Ցագարելիի ԽԱՆՈՒՄԱ 2-դ արարուած ռեժիսեօր՝ Շատիրօվ
IV
ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Մասնակցում են՝ տ. տ. (ըստ այբուբենի) Տ. Աբաշիձէ, Ն. Գաբունիա-Ցագարելի, Ա. Գարգարէտելի, Վ. Մելիքեան, Եղ. Չերքէզօվա, Վ. Վարդանի, օր. օր. Թ. Գօգօլաշվիլի, Վ. Ջմշկեան, պ. պ. Վ. Աբաշիձէ, Գ. Միրաղեան-Գեդևանօվ, Վ. Գամկրելիձէ, Ն. Գոցիրիձէ, Ա. Իմէդաշվիլի, Ա. Մամիկոնեան, Գ. Մգալոբլիշվիլի, Ե. Զ. Տէր-Դաւթեան:
Տեղերի գինը բենեֆիսային:
Մնացած տոմսակները վաճառվում են Թատրոնի կասսայում:
Սկիզբն է 8½ ժամին:
0—3 (ստ.) 466. (կ.ե.հ.) Կարգադրիչ մասնաժողով

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.
Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(ե. հ. կ.) (ստ.) 1045. 100—90

ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

II

Մեր անցեալ յօդուածում վերլուծութեան ենթարկելով այն տարրերը, որոնք կոչված են համարվում ազգութիւն կազմելու համար, մենք տեսանք, որ չը կայ ոչ մի տարր, ոչ մի գործօն, որ լինի ընդհանուր բոլոր տեղերի հայերի համար:

Մենք տեսանք, որ հայը ունի մի քանի կրօններ, որ հայը խօսում է զանազան լեզուներով, որ նրանից խորթացել և օտարացել են նոյն ծագումի մասսաներ, որ չը կայ երկիր բացառապէս հայերով բնակեցված և այլն:

Բայց հայը կայ, հայութեան գաղափարը գոյութիւն ունի:

Թող դա լինի նոյն իսկ միայն կուլտուրական հասկացողութիւն, միայն ազգագրական մի տերմին. դա իրողութիւն է:

Մի ժամանակ կրօնը ունէր գերիշխող, ամենաբովանդակ գաղափարական ազդեցութիւն պատմական հայի վրա: Երբ քրիստոնէութիւնը նոր մուտք էր գործել հայերի մէջ և յետոյ այնքան ամրացել էր, որ հինգերորդ դարը կարողացաւ հանդէս բերել մասսայական շարժում ի պաշտպանութիւն այդ կրօնի, այն ժամանակ հայերի բոլոր մտածմունքները, իղձերը, աշխարհահայեացքը և փիլիսոփայական ըմբռնումները գտնում էին կատարեալ բաւարարութիւն քրիստոնէական վարդապետութեան մէջ:

Գիտութիւնը, հասարակագիտութիւնը, իրաւաբանութիւնը, գեղարուեստը՝ բոլորը մտել էին քրիստոնէական կրօնի և նրա մեկնաբանութիւնների մէջ:

Կրօնն էր որոշողը և դատաւորը ամեն մի մտաւոր և բարոյական շարժման:

Եւ երբ պատմական մի օր ազգը կորցրեց իր ներքին փոխադարձ կապի քաղաքական և քաղաքացիական բնաւորութիւնը, այդ կապի արտայայտութիւնը անցաւ կրօնի հեղինակութեան: Կրօնը հանդէս եկաւ արտայայտելու ազգային միութիւնը և ազգային ներկայացուցչութիւնը, մանաւանդ որ պատմական հանգամանքների շնորհիւ հայութեան կրօնը ստացել էր ուրոյն զարգացում և տարածվել էր միայն հայերի և սահմանակից փոքրաթիւ ուտիների մէջ:

Սակայն կրօնական միութիւնը երկար չը տևեց: Կաթօլիկական քարոզչութիւնը պառակտում գցեց ազգի մէջ և մի քանի ժամանակից յետոյ կազմվեցին երկու դանգուածներ՝ լուսաւորչական և կաթօլիկ: Եւ թէև ազգի մեծագոյն մասը նախկին լուսաւորչական դաւանութեան շուրջն էր, այնուամենայնիւ այդ պառակտման օրից խախտվեց ազգային կրօնական միութեան գաղափարը: Իսկ ժամանակի ընթացքում այդ երկու դանգուածներին աւելացաւ նաև բողոքական հայերի դանգուածը:

Միևնոյն ժամանակ ինքը կրօնը սկսեց կորցնել իր նախկին ամենակալ և ամենազօր նշանակութիւնը: Գիտութիւնը, արուեստը, կենցաղը, հասարակական շարժումները սկսեցին թօթափել իրանցից կրօնի գերիշխանութիւնը և որոնել ինքնուրոյն ուղիներ իրանց զարգացման համար, ազատ կրօնական հեղինակութիւնից:

Հայութեան մէջ էլ սկսեց տեղի ունենալ քննադատական մտածողութիւն և վերագնահատութեան ենթարկվեցին այն գործօնները, որոնք շատ թէ փոքր ազդեցութիւն ունէին ազգային կեանքի վրա:

Եւ ահա կամաց-կամաց պարզվեց հասարակական մտածողութեան համար, որ ազգաշինական տեսակէտով կրօնը կորցրել է իր նախկին հեղինակութեան մի խոշոր մասը և որ պահանջ է զգացվում ուրիշ գործօնների զարգացման: Առաջնակարգ տեղ տըրվեց ոչ-կրօնական ժողովրդական ստեղծագործութեանը, ժողովրդական հանճարի արտայայտութեանը, կուլտուրական քնած ույժերի սթափմանը, ժողովրդական ընդհանուր կրթութեան տարածմանը, գեղարուեստի, գրականութեան, թատրոնի զարգացմանը:

Եւ այնտեղ, ուր առաջ կանգնած էր միայն կրօնական հեղինակութիւնը, այն էլ փտանքի և պառակտման սպառնալիքներին ենթարկված, զուգընթաց հանդէս եկան նոր գործօններ՝ կոչված ազդելու ժողովրդական կեանքի վրա աւելի զօրաւոր, աւելի յեղաշրջող ներքին ույժով:

Քննադատական ոգին սկսեց խօսել և հետևանքներ առաջացնել: Հասարակութիւնը սկսեց զգալ և գիտակցել, որ կրօնը, պահպանելով իր վեհութիւնը խղճի և դաւանանքի վերաբերութեամբ, կորցրել է և կորցնում է իր հեղինակութիւնը գիտութեան, արուեստի, կենցաղի և հասարակագիտութեան վերաբերութեամբ:

Բայց միևնոյն ժամանակ արժանի է ուշադրութեան այն հանգամանքը, որ մինչդեռ հին գերիշխող մեծ գործօնը, կրօնը, բացի բարոյական հեղինակութիւնից բերում է իր հետ և պատմական իրաւասական արտօնութիւններ, նոր գործօնները դեռ ջանքեր են գործ դնում նուաճելու հեղինակութիւն և գրաւելու, եթէ հարկաւոր համարվի, նաև իրաւական հաստատուն դիրքեր:

Եւ որովհետև հին գործօնների թուլանալը և նոր գործօնների հանդէս գալը միատեսակ չէ ըմբռնվել և գնահատվել հասարակութեան ղեկավար շրջանների մէջ, բնականաբար առաջ են եկել հոսանքներ և գաղափարական կուսակցութիւններ:

Մեր կուլտուրական առաջադիմութիւնը առհասարակ և եւրօպական պետութեան մէջ ապրելը, ուր սկսած Պետրոս Մեծից զարգանում են քաղաքացիական կեանքը, աշխարհիկ մտածողութիւնը ու իրաւագիտութիւնը, գրականութիւնը և արուեստը, անշուշտ՝ պէտք է թելադրէին որոնել նոր ուղիներ և նախկին սահմանափակ, յաճախ կղերամիտ հասկացողութիւններից ոտք դնել եւրօպական ընդարձակ զարգացման դաշտավայրի վրա:

Թող պատմական գործօնները շարունակեն տալ իրականութեան՝ ինչ որ դեռ պահպանել են իրանց մէջ գաղափարական և իրաւաբանական, բայց զուգընթացաբար մենք հետամուտ ենք, որ այն նոր կուլտուրական գործօնները, այն ուժեղ և շինարար հոսանքները, որոնք հանդէս են եկել կեանքի ասպարէզում թարմացնող և բեղմնաւորող էութեամբ, զարգանան կանոնաւոր կերպով և հաստատված խաղաղ առաջադէմ գործունէութեամբ և քաղաքացիական միասնակեցութեան վրա վերաստեղծեն մեր կեանքը, որ իր մեծագոյն մասում դեռ կրում է միջին դարերի ծանր կնիքը իր վրա:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 1 մայիսի

Այն ուղերձի վրա, որ ներկայացրին հարկատու տեսուչները և նրանց օգնականները ֆինանսների մինիստրի միջոցով Թագաւոր կայսրին, Նորին Մեծութիւնը բարեհաճեց մակագրել. «Անկեղծօրէն շնորհակալ եմ օրինակելի 25-ամեայ ծառայութեան եւ արտայայտված զգացմունքների համար»: (Հ. Գ.)

Պեատիգորսկ, 1 մայիսի

Բացվեց բժշկութեան սէզօնը: Հիւանդների գալը սկսվեց: (Հ. Գ.)

Լօնդօն, 2 մայիսի

Երեկոյեան հանգուցեալ Թագաւորի մարմինը փոխադրվեց գահական դահլիճը: (Հ. Գ.)

Բերլին, 2 մայիսի

Ռուզվէլտը ընտանիքով մեկնեց Լօնդօն: (Հ. Գ.)

Բրինդիզի, 1 մայիսի

«Ամֆիտրիտա» զբօսանաւով ժամանեցին յունաց Թագաւորը և գահաժառանգը, որոնք գնում են Լօնդօն ներկայ լինելու Էդուարդ Թագաւորի թաղմանը: (Հ. Գ.)

Խրիստիանիա, 1 մայիսի

Պարլամենտը 71 ձայնով ընդդէմ 10-ի ընդունեց կանանց համայնական ընտրողական իրաւունքներն ընդարձակող օրինագիծը: Ընտրութիւններին մասնակցողների թիւը կաւելանայ աւելի քան 200 հազար մարդով: (Հ. Գ.)

Վիէննա, 1 մայիսի

Պատգամաւորների պալատում Մարկօվը մատնանշեց, որ գիւղացիական մի պատգամաւորութիւն առաջիկայ ընտրութիւնների առիթով յայտնել է, թէ գիւղացիների վրա զինուորները կը կրակեն, եթէ նրանք կը միան ռուսասէրներ (ուժեղ շարժում): Նախագահը յայտնեց, որ բողոք կարելի է ներկայացնել հարցապնդման ձևով: (Հ. Գ).

Մադրիդ, 2 մայիսի

Մինիստր նախագահը արգելեց այսօր հանրապետականներին և սօցիալիստներին տօնը կատարել ընտրութիւններին տարած յաղթութեան առիթով: (Հ. Գ.)

Բուէնօս-Այրէս, 2 մայիսի

Ի նկատի ունենալով, որ անիշխանականները վճռել են ընդհանուր գործադուլ անել Արգենտինայի անկախութեան 100-ամեակի տօնակատարութեան առիթով, կառավարութիւնը պատգամաւորների պալատի և սենատի հաւանութեամբ հանրապետութեան մէջ յայտարարեց պաշարողական դրութիւն անորոշ ժամանակով: Մի քանի ուսանողներ ներս խուժեցին տեղական անիշխանականների և սօցիալիստների խմբագրատները, ջարդեցին մեքենաները և ուրիշ վնասներ տուին: (Հ. Գ.)

Մոսկվա, 2 մայիսի

Առևտրի մինիստրի նախագահութեամբ ֆոնդային բորսայի շինութեան մէջ բացվեց Մերձաւոր Արևելքի հետ առևտրական յարաբերութիւնները զարգացնելու միջոցների հարցի մասին գումարված համառուսական համաժողովը: Ողջոյնի ճառ արտասանեց բորսային կօմիտէտի նախագահ Կրեստօվնիկօվը, որ երկար կանգ առաւ ռուսական առևտրի ու արդիւնաբերութեան անկման պատճառների և նրանց բարեմշակելու հարցերի վրա: Պատասխանեց մինիստրը, որից յետոյ Կրեստօվնիկօվը խնդրեց առ ոտս Կայսրի արկանել համագումարին մասնակցողների ամենահպատակ զգացմունքները:

Ապա իշխան Ամատունին կարդաց Մերձաւոր Արևելքի ռուսական շուկայի մասին պատմական մի տեսութիւն և տուեց շարժական ցուցահանդէսի ընդհանուր պատկերը: Այնուհետև եղան զեկուցումներ զանազան խնդիրների մասին, որոնք կապ ունեն առևտրի հետ: (Հ. Գ.)

Պետերբուրգ.—Մայիսի 5-ին նահանգական դատարանում քննվելու է Պետական Դումայի նախագահ Գուչկովի գործը, որին Դուբրովինը մեղադրում է հնադանդներից հարիւր հազար ռուբլի կաշառք վերցնելու մէջ:

Քաղաքային դուման 10,000 ռուբլի յատկացրեց հեղեղից վնասված սերբերի օգտին:

Առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրութիւնը մինիստրների խորհրդին մի առաջարկութիւն արեց կովկասեան հանքային ջրերի կառավարութեան ձևը վերակազմելու մասին:

Փակելով Պիրոգօվի անուան համագումարը, պրօֆեսոր Սալազկինը առաջարկեց ցանկութիւն յայտնել մահվան պատիժը վերացնելու մասին: Առաջարկութիւնը ընդունվեց ցնծագին ոգևորութեամբ:

Լեհ պատգամաւորների տեղեկութիւնների համաձայն, Լեհաստանում կատարվում են բազմաթիւ ձերբակալութիւններ բանւորների և ինտելիգենցիայի մէջ: («Б.»)

Պետերբուրգ.—Ֆինլանդական հարցը քննող մասնաժողովի նիստը չափազանց աղմկալի էր: Օպպօզիցիան նիստից հեռացաւ: Օրինագծի առաջին կէտերը ընդունվեցին կառավարական խմբագրութեամբ:

Ֆինլանդական սենատի դատախազը հրաժարական տուեց:

Զինւորական խորհրդի արտակարգ նիստում որոշվեց 2 հազար ռուբլի մրցանակ տալ օդապարիկով Պետերհօֆ գնալու և վերադառնալու համար:

Պետերբուրգում ստացված տեղեկութիւնների համաձայն, կրետական ջրերն են ուղարկված անգլիական և իտալական պատերազմական նաւեր: Երէկ ուղարկվեց նաև ռուսական «Մակարօվ» մարտանաւը: Մեծ պետութիւնները կրետացիների վճռին ուշք չեն դարձնում: Ըստ երևոյթին պատերազմը Յունաստանի և Կրետէի միջև անխուսափելի է:

Ռուսաստանը խանդուն մասնակցութիւն կունենայ 1910 թ. մայիսին կայանալիք առողջաբանութեան միջազգային համագումարին:

Ապրիլի 30-ին օդապարիկներով թռչելու տեսարանին ներկայ էին 160,000 մարդ, 11,000 կառք և 1700 աւտօմօբիլ: («Б.»)

Լօնդօն.—Թագաւորը ընդունեց դեսպան Բենկենդօրֆին և յոյս յայտնեց, թէ բարեկամութիւնը Ռուսաստանի հետ այսուհետև էլ կը շարունակվի: („Б.“)

Ընդհանուրի վիշտ է առաջացրել դեպուտատ Պօմպիլիի ինքնասպանութիւնը, պատգամաւորի, որ համարվում էր ամենատաղանդաւոր քաղաքական գործիչներից մէկը Իտալիայում: Ինքնասպանութեան պատճառը եղել է նրա կնոջ մահը, իտալական յայտնի գրող Վիկտօրիա-Աղանուր Պօմպիլիի, որ վախճանվեց ծննդաբերական հիւանդանոցում, օպերացիայից յետոյ: Վիկտօրիա-Աղանուրը հայուհի էր, վենետիկցի, և նրա բանաստեղծութիւնները, շատ կատարելագործված՝ ձևի կողմից, վերջին տասնամեակներում մեծ աջողութիւն ունէին Իտալիայում: Երբ նա վախճանվեց, ամուսինը մտաւ այն սենեակը, ուր դրած էր նրա մարմինը, և վերջ տուեց իր կեանքին: Պօմպիլին երկու անգամ արտաքին գործերի մինիստրի օգնական է եղել և պատուիրակ էր գնացել Իտալիայի կողմից Հաագայի խաղաղասիրական խորհրդակցութեան: Նա 60 տարեկան էր, իսկ նրա կինը՝ 45 տարեկան: Ռուսաց լրագրի («Рус. Вѣд.») այս հաղորդածին մենք կաւելացնենք, որ Վիկտօրիա-Աղանուրի բանաստեղծութիւններից մի քանիսը թարգմանված են հայերէն («Բազմավէպում») և ռուսերէն («Нов. Вѣст. Иностр. Литературы»): Հայուհի բանաստեղծը յայտնի էր և Ֆրանսիայում:

«Рус. Вѣд.» լրագրին հեռագրում են Պարսկաստանից, որ հայազգի բժիշկ յայտնի Փաշայեան խանը գտել է միջոց օպիումոլների (թիրեաք) սարսափելի հիւանդութեան դէմ: Եթէ ճիշդ է այդ լուրը, այդ դէպքում այս գիւտը մեծ ծառայութիւն է մարդկութեանը, մանաւանդ Ասիայում բնակվողների համար:

Հռոմ.—Մաքսիմ Գորկին Կապրի կղզուց մեկնեց Նորվեգիա: («Б.»)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խաղարկու տոմսերի տարած համարները։ Երկու հարիւր հազար. սէրիա 13477, համար՝ 44։ Յօթանասուն և հինգ հազար՝ 12903/27։ Քառասուն հազար 918/22։ Քսանևհինգ հազար՝ 2681/46։ Տասն հազար՝ 5404/13, 7213/1, 13085/35։ Ութ հազար՝ 11492 15, 14292/13, 7492/21, 5165/13, 14438/2։ Հինգ հազար՝ 231/35, 5851/42, 14876/17, 12748/16, 9167/36, 14954/36, 8609/28, 291/5։ Մի հազար՝ 13759/32, 3173/19, 7465/33, 13925/48, 4723/47, 9935,/43, 6186/3, 2424/49, 2553/14, 5220/18, 11390/44, 4329/35, 3349/45, 12288|1, 7742/32, 12246/46, 11552/11, 8129/8, 3290/41, 3108/41.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Լօնդօն, 1 մայիսի

Ռէյտէրի գործակալութիւնը հաղորդում է, որ Թիւրքաց կառավարութիւնը արտաքին գործերի մինիստրութեանը ներկայացրեց մի Նօտա, որի մէջ բողոքում է, որ կրետացի պատգամաւորները երդում պիտի տան յունաց Թագաւորին։ Բ. Դուռը յայտնում է, որ միջադէպը նա սպառված չէ համարում և վերստին դիմեց այդ գործի առիթով հովանաւորող-պետութիւններին։ (Հ. Գ.)

Սօֆիա, 1 մայիսի

Թիւրքաց գահաժառանգին կայարանում դիմաւորեցին Բօրիս արքայազնը և Մալինօվ ու Պապրիկօվ մինիստրները։ (Հ. Գ.)

Սալօնիկ, 2 մայիսի

Կայացաւ միտինգ յունաց Թագաւորին երդում տալու առիթով։ Միտինգին խօսեցին Թիւրքեր, ալբանացի, յոյն, բուլղար, սերբ, վալախ, հրէայ։ Ընդունված բանաձևով առաջարկվում է կառավարութեանը երեք օրվայ մէջ փոխել տալ երդումը՝ պահանջելով հակառակ դէպքում պատերազմ Յունաստանի հետ։

Ալբանացիների գլխաւոր ույժերը կենտրոնացած են Դրէնիցում։ Այնտեղ են գտնվում Չէրնօլէվի ճակատամարտի բոլոր մասնակցողները, 10,000-ից աւելի մարդ։ Երկու օր կռիւ չեղաւ։ Թիւրքաց զօրքերը հանգստանում են Ֆէրիզօվիչում, ուր բերվեցին 300 արկղ՝ արտիլերիական մթերքներով և եկաւ գեներալ Սամի-փաշան։ Ռամադան-Զաւիկը կտրեց Տիտօվից Պրիզրէն գնացող ճանապարհը։ (Հ. Գ.)

Կ. Պօլիս.—Մեծ վէզիրը մի սպառնական նամակ ստացաւ ալբանական գործադիր մարմնից։ Ալբանացիները սպառնում են նրան անողոք մահ՝ եթէ նա կը շարունակէ իր հին քաղաքականութիւնը։ («Б.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թեհրան, 2 մայիսի

Նկատի առնելով այն բազմաթիւ բողոքները, որոնք ուղղված են դատական հաստատութիւնների դանդաղկոտութեան և անարդարութեան դէմ, պետական խնամակալը մի հրովարտակով փակեց արդարադատութեան մինիստրութիւնը 15 օրով։ Մինիստրութեան պաշտօնեաները հրաժարվեցին հնազանդվել։ Սիփէհդարը հրաժարական տուեց։ Մէջլիսի նախագահը այցելեց աւագագոյն մուշտէիդներին, համոզելով դադարեցնել ագիտացիան դատական հաստատութիւնների դէմ։ (Հ. Գ.)

Բերլին, 2 մայիսի

«Ֆօսիշէ-Ցայտունգին» հեռագրում են Անգլիայից. «Պարսկական փոխառութեան հարցը սպառնում է ստանալ միջազգային բնաւորութիւն։ Ռուսաստանը և Անգլիան տեղեկացրին Պարսկաստանին, որ նրանք թոյլ են տալիս ռազմագիտական ճանապարհներ կառուցանելու ժամանակ կնքել այնպիսի փոխառութիւններ, որոնց վրա կարող են հսկել միայն Անգլիան և Ռուսաստանը։ Լօնդօնի գերմանական դեսպանը այդ առիթով բանակցութիւն վարեց Գրէյի և Հարդինգի հետ, սակայն անգլօ-ռուսական տեսակէտը հաշտեցնել չաջողվեց։ Գերմանական կողմից ընդգծվեց, որ հակասական կը լինէր ինքնին միջազգային իրաւունքի սկզբունքներին, եթէ երկու պետութիւնները կնքելու լինեն այնպիսի պայմանագիր, որ սեղմում է երրորդ պետութեան իրաւունքները։ Պարսկական հարցը սպառնում է մարօկկեան հարցից էլ սուր բնոյթի լինել։ Եռապետեան դաշնակցութեան պետութիւնների առևտրա-քաղաքական շահերի միատեսակ սահմանափակումը անգլօ-ռուսական համաձայնութիւններով արտայայտվում է նաև պարսկական հարցում»։ (Հ. Գ.)

Ուրմիա, 2 մայիսի

Հացավաճառները և օպիում ծախողները, նոր հարկերից դժգոհները, բողոքեցին քաղ. վարչութեան դէմ, որին անմիջապէս հրաժարական տուեց։ (Հ. Գ.)

Ուրմիա, 1 մայիսի

Սուլտանիէից հաղորդում են, որ Կ. Պօլսից ստացված կարգադրութեան համաձայն տուրքերի գանձումը Կովկասի նախկին բնակիչներ ղարափափախներից դադարեցվեց։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կիրակի, երեկոյեան ժամը 8-ին, «Աղբիւր-Տարազի» խմբագրատանը, Հ. Առաքելեանի նախագահութեամբ, կայացաւ Թիֆլիսի 23 եկեղեցիների ծխականների մասնաւոր խորհրդակցական ժողով Ներսիսեան դպրոցի առաջիկայ հոգաբարձութեան ընտրութեան հարցի առիթով։ Խորհրդակցութեանը մասնակցում էին զանազան եկեղեցիներից եկած մօտ 40 ծխականներ։

Ծանօթանալով առաջնորդի հրատարակած կանոնների հետ, որոնց համաձայն Թիֆլիսի ամեն մի եկեղեցի պէտք է ընտրէ 2 պատուիրակ և 2 կանդիդատ, իսկ Թեմի միւս քաղաքների եկեղեցիները մի-մի պատուիրակ, և իւրաքանչիւր գործակալութիւն նոյնպէս մի պատուիրակ, ժողովը գտաւ, որ Թիֆլիս քաղաքը տալու է իր 23 եկեղեցիներով 46 պատուիրակ, Թեմի 16 գործակալութիւնները 16 պատուիրակ և Գանձակ, Սղնախ, Քութայիս, Բաթում, Փօթի, Ախալցխա, Ախալքալաք, Գօրի քաղաքների ամեն մի եկեղեցին մի-մի պատուիրակ, որով ընդամենը մօտ 75 պատուիրակներ։

Ժողովականները երկար խօսեցին այն սկզբունքների մասին, որոնցով պէտք է ղեկավարվել ներկայ ընտրութիւնների ժամանակ, ենթարկեցին քննադատութեան նախորդ և ներկայ հոգաբարձութիւնների գործունէութիւնը թէ դրական և թէ բացասական կողմերից և ի վերջոյ կազմեցին ընտրելի պատուիրակների կանդիդատների ցուցակը, որ յանձնվեց 7 հոգուց բաղկացած մի մասնաժողովի, որպէսզի նա կանդիդատների հաւանութիւնն առնէ և կազմակերպէ ընտրական պայքարը։ Ընդունված սկզբունքներից գլխաւորն է հեռու մնալ նեղ կուսակցական ոգուց, ընտրել պատուիրակներ՝ անպայման առաջադիմական մարդկանց, իսկ հոգաբարձուների ընտրութեան հարցում ղեկավարվել այն սկզբունքով, որ Ներսիսեան դպրոցի համար անհրաժեշտ է ընտրել այնպիսի հոգաբարձական մարմին, որ նախորդի նման մեծամեծ և լայն փքուն և անիրագործելի ծրագիրներ չը խոստանայ, այլ կարողանայ իրագործել աւելի. խելացի, գործնական ծրագիր, այն է բարձրացնել Ներսիսեան դպրոցի այժմ խախտված տնտեսական վիճակը, բարձրացնել ուսումնական մակարդակը, վերահաստատել մանկավարժական ժողովի հեղինակութիւնը և ստեղծել արժանապէս կրթված աշակերտութիւն, որոնցից պէտք է դուրս գան հայ ժողովրդի համար պիտանի և օգտակար ույժեր։ Ներսիսեան դպրոցը պէտք է գիտութեան, լուրջ կրթութեան ջահ հանդիսանայ հայ ժողովրդի համար։

ՄԻ ՅՕԲԵԼԵԱՆ

Ապրիլի 30-ին Վերայի «Ֆանտազիա» այգում տեղական հարկային տեսուչները ընկերական ճաշով տօնեցին հարկային տեսչութեան հիմնադրութեան 25-ամեակը։ Ճաշկերոյթին մասնակցում էին պաշտօնում ներկայումս եղող տեսուչները, քաղաքումս գտնվող նախկին տեսուչները՝ Փոխարքայի խորհրդի ֆինանսական անդամ Ն. Ֆ. Զունկօվսկին, պետական բանկի կօնտօրայի կառավարիչ Բեզօբրազօվը, գիւղացիական բանկի կառավարիչ Ուստինօվը, պատւաւոր հիւրեր՝ Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատօր Է. Ա. Վատացին և դիւանապետ Ն. Լ. Պետերսօնը։

Ճաշի սկզբում—խորտիկների ցուցակը կազմված էր սրամիտ կերպով—սենատօր Է. Ա. Վատացին առաջարկեց Փոխարքայի կենացը, որպէս մի խոշոր պետական գործիչի, որ գիտէ անաչառ լինել, լայն, հեռու որևէ մասնաճիւղի (վեդօմստվօ) շահերի տեսակէտից նայել պետական գործերին, որի սրտին մօտ են և հարկային տեսուչները և նրանց գործունէութիւնը։ Փոխարքայի կենացը ընդունվեց մեծ ոգևորութեամբ և նրան ուղարկվեց բոլոր ներկայ եղողների կողմից հեռագրական ուղերձ։ Ֆինանսների մինիստրի Կովկաս ներկայացուցիչը, պետական բանկի կօնտօրայի և արքունի պալատի կառավարիչները զանազան տեսակէտներից բնորոշեցին հարկային տեսչի գործունէութիւնը, այն յեղաշրջումը, որ տեղի է ունենում մեր օրերում պետական հարկատուութեան գործում, աւելի պատասխանատու դարձնելով հարկային տեսուչների պաշտօնը։ Նախկին տեսուչ Պետրոս Զաքարեանցը բնորոշեց մինստր Բունգէի գործունէութիւնը, մինիստրի՝ որ նախագծեց հարկային տեսչութեան հիմնադրութիւնը և հարկային տեսուչների գործունէութիւնը Անդրկովկասում։ Մի գեղեցիկ ճառով արքունի պալատի կառավարիչը, Վ. Ֆ. Օստրօվսկի, բնորոշեց ֆինանսների մինիստր Կօկօվցեվին, որին ուղարկվեց շնորհաւորական հեռագիր։ Ողջունեցին և ճառեր արտասանեցին ի պատիւ բարձր հիւրի, Փոխարքայի օգնական Վատացիի, դիւանապետ Պետերսօնի, հարկային տեսչութեան մօտիկ անձն Զունկօվսկիի, արքունի պալատի ներկայացուցչի, կառավարիչ Օստրօվսկիի և ուրիշների։ Ընկերական ուրախ ճաշը տևեց մինչև գիշերվայ ժամը 11-ը։

Յատուկ հրաւիրված լուսանկարիչը հանեց ճաշին մասնակցողների խմբական լուսանկարը։ Ստացվել էին Կովկասի զանազան տեղերից բազմաթիւ հեռագիրներ՝ նախկին և ներկայ հարկային տեսուչներից, նոյնիսկ օտար քաղաքներից եկել էին յատկապէս այս տօնին երկու տեսուչներ։

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ ՅՕԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Մօսկվա, 2 մայիսի

Տօնվեց հայազգի բանաստեղծ Ծատուրեանի գրական գործունէութեան 25-ամեայ յօբելեանը։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը յօբելեարին ուղարկել էր օրհնութեան գիր։ Հայ գաղութը մատուցեց խոշոր դրամական ընծայ։ (Հ. Գ.)

Բանաստեղծ Ալէքսանդր Ծատուրեանի յօբելեանի առիթով Մ. Ալլահվերդեանց զետեղել է «С.-Петербургскія Вѣд.» լրագրի № 91-ում (ապրիլի 25) մի յօդուած, որով տալիս է ամփոփ տեղեկութիւններ յօբելեարի և նրա գործունէութեան մասին։

Նկարագրելով բանաստեղծի մանկութեան և պատանեկութեան ծանր օրերը և անցնելով նրա բանաստեղծական երկերի բնորոշման՝ յօդուածագիրը ասում է.

Ալէքսանդր Ծատուրեանը գլխաւորապէս քնարերգու բանաստեղծ է։ Նրա ոտանաւորները համակված են տրտմութեան և վշտի զգացմունքով։ Իր շարագրութիւնների վերջին հատորը, որ կրում է «Փշէ հանգոյցներ» անունը, պարունակում է թեթև բանաստեղծական կտորներ։

Այնուհետև յիշատակում է Ա. Ծատուրեանի արած թարգմանութիւնները ռուսերէնից հայերէնի և ընդհակառակը («Պէպօի» թարգմանութիւնը)։

Վերջում ցանկութիւն է յայտնում, որ հասարակութիւնը ապահովէր բանաստեղծին, որը տկար առողջութեան տէր լինելով արժանի է կողմնակի օժանդակութեան։

Տեղական հայ թերթերից ինչպէս «Մշակը», նոյնպէս և «Սուրհանդակը» ողջունեց մայիսի 2-ին Ալէքսանդր Ծատուրեանի յօբելեանը.

Այսօր Մօսկվայի հայ գաղութը հանդիսաւորապէս տօնում է իր անդամներից մինի՝ բանաստեղծ Ալէքսանդր Ծատուրեանի գրական գործունէութեան 25-ամեայ յօբելեանը։

Այն ժամանակ, երբ հայ լեզուի ու գրականութեան ծառայելը, հայ մտքին ու գեղարուեստին նպաստելը համարվում է անձնազոհութիւն, նրանց ամենի համար, որոնց դեռ ևս քաղցր ու թանգ է մայրենի լեզուի, գրականութեան ու գեղարուեստի զարգացումը, իսկապէս թանգ ու գնահատելի պիտի լինի և այս օրվան տօնը՝ Ծատուրեանի յօբելեանը։

Ժամանակը չէ նրա գրական գործունէութեան գնահատումը տալու այսօր, բայց ժամանակ է վերջապէս, որ հայ մտաւորականութիւնը, նա, որ սիրում է միշտ բարձրից խօսել ու ճառել, սրտանց գնահատէր Ծատուրեանի պէս մի համեստ անձնաւորութեան և արժանաւոր գրողի գործունէութիւնը, հէնց թէկուզ միայն այն պատճառով, որ նա իր գրիչը երբեք չէ դարձրել շահագիտական գործիք և չէ տարուբերվել գաղափարների լաբիրինթոսի մէջ, ինչ որ այսօր մի առաքինութիւն է համարվում...

Ալէքսանդր Ծատուրեանը մինչև օրս մնացել է զուտ բանաստեղծ ու զգօն մարդ, իսկ այս առաւելութիւններով այսօրվա շատերը չեն կարող պարծենալ մեզնում։

Որչափ էլ ցաւալի է, որ այսօրվայ յօբելեանը տօնվում է հայութեան կենտրոններից հեռու մի վայրում, նոյնչափ էլ ուրախալի է, որ այսօր շատ շատերը իրանց լաւագոյն իղձերով իրանց միտքն ուղղում են դէպի Մօսկվա իրանց սիրելի բանաստեղծի մօտ։

Շատերի հետ մենք էլ՝ մեր շնորհաւորանքն ենք ուղարկում հայկական ցաւ ու տանջանքի զաւակին—բանաստեղծ Ալէքսանդր Ծատուրեանին, իր գործունէութեան 25-ամեակի տարեդարձին։ Շնորհաւորանքի հետ և անկեղծ շնորհակալութիւն հայ գեղարուեստին ու գրականութեանը նրա մատուցած ծառայութեան համար։

«Մշակի» № 92-ում հաղորդել էինք, որ բանաստեղծ Ալ. Ծատուրեանի յօբելեանի առիթով համակրողների մի խումբ մայիսի 1-ին շնորհաւորական հեռագիր է խփել յօբելեանական յանձնաժողովին։ Շնորհաւորողների թւում կար և յօբելեարի մօտիկ ծանօթ Ալէքսանդր Ստեփանեանը, որի անունը սխալմամբ չէ տպվել «Մշակում» լոյս տեսած հեռագրի տակ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ստաւրօպօլ, 20 ապրիլի

Ստաւրօպօլի հայ հասարակութիւնը, եթէ չասեմ բոլորովին զուրկ, գոնէ խիստ աղքատ է անկախ մտածող, անվեհեր ու շիտակ քննադատող և հայ իրականութեան լաւ ծանօթ ինտելիգենտ թարմ ույժերով։ Շատ ազգային խնդիրներ, լինեն դրանք դպրոցական, եկեղեցական կամ ընդհանուր հասարակական բնաւորութիւն կրող, շատ անգամ այստեղ վճռվում են տնավարի կերպով։ Այստեղ, կարելի է ասել, ամեն ինչ հնի կրկնութեամբ է ընթանում, առանց խորապէս ուսումնասիրվելու և լուսաբանվելու։ Մի խօսքով մեր իրականութիւնը շատ տխուր է, անգոյն և անկերպարան, ինչպէս ընդհանուր ազգաբնակութեան կեանքը։ Մեր հասարակական գործունէութեան վրա մեռելութիւն է թագաւորում. քիչ-շատ բարեփոխելու նպատակով արվող փորձերը խեղդվում են հէնց սաղմի մէջ, որովհետև մեր հասարակութիւնը զերծ չէ մութ ույժերից, որոնց միակ դեվիզն է՝ «ինձնից յետոյ թէկուզ ջրհեղեղ լինի»։

Այդ տեսակէտից շատ ուրախալի էր մեր հասարակութեան անդամների շարքում անսպասելի կերպով Արսէն Քալանթարի երևալը, որը իբրև այգեգործութեան ուսեալ ինստրուկտոր՝ անցեալ օգոստոսի վերջերին Պետերբուրգից Ստաւրօպօլ տեղափոխվեց նահանգական այգեգործութեան ինստրուկտորի պաշտօնով։ Ճիշդ է, գործի սկզբնաւորութեան պատճառով նա շատ ծանրաբեռնված լինելով իր պաշտօնական գործերով և յաճախ շաբաթներով ու նոյնիսկ ամիսներով գաւառները շրջելով՝ դեռ ևս ժամանակ չէ ունեցել հայ հասարակական գործերին ըստ հարկին մասնակցելու, բայց մի ծխական ժողովում բաւական եղաւ հասկանալու, որ նա մեր լճացած կեանքում օգտակար հասարակական գործիչ է լինելու։ Ինչ վերաբերում է իր պաշտօնին, պէտք է ասենք, որ նա այս կարճ ժամանակում իբրև պատրաստված մասնագէտ՝ մեծ համակրանք վաստակեց այգեգործութեամբ հետաքրքրվողների և մասնաւորապէս այգեգործ գիւղացիների շրջանում։ Նա շատ յաճախ դասախօսութիւններ է կարդացել թէ քաղաքում և թէ գիւղերում, որոնք միշտ արժանացել են ունկնդիրների սրտագին շնորհակալութեան։

Այժմ, ինչպէս լսում ենք, բարձրից կարգադրութիւն է եղել՝ Արսէն Քալանթարին տեղափոխելու Պետրօվսկօյէ մեծ գիւղը (մեզանից մօտ 100 վերստ հեռու), որտեղ նրա պէս պատրաստված ինստրուկտորի մեծ կարիք կայ։ Լսեցինք, որ տեղիս Գիւղատնտեսական Ընկերութիւնը մի խնդրով դիմել է ում հարկն է՝ Արսէն Քալանթարին Ստաւրօպօլից չը տեղափոխելու համար, որովհետև այստեղ էլ նրա նման մասնագէտների կարիքը շատ մեծ է։

Խաչ. Տէր-Ենօքեան

Իգդիր, 18 ապրիլի

1890 թ. Իգդիրի ուսումնարանի հոգաբարձուներ Սամուէլ քհ. Սողոմոնեանը, երէցփոխ Ղարիբ Գրիգորեանը, Սմբատ Աւագեանը և Յակոբ Կանայեանցի (իսկ նա վերջինիս փոխանորդն էր) օրօք ուսումնարանապատկան կշռոցը և մսավաճառութիւնը տրված էր կապալով Իգդիրցի եղբ. Ստեփան և Յովսափ Խաչատրեան Աւագեաններին 1397 րուբլով։ Կապալավարձը ժամանակին չը ստացվելուն համար, հոգաբարձուներ Ս. քհ. Սողոմոնեան, Ղ. Գրիգորեան և Ս. Աւագեան դիմում են Սուրմալուի հաշտարար դատարանին, որը վճռում է պահանջել եղբ. Աւագեաններից ամբողջ 1397 ր.։

1892 թ. սեպտ. 16-ին դատարանական պրիստաւի միջոցով ցուցակագրվում է եղբ. Աւագեանների երեք խանութը, տունը և այգին։ 1893 թ. յունվարի 30-ին աճուրդով ծախվում է վերոյիշեալ կայքը։ Հոգաբարձուներից Սմբ. Աւագեանն ինքն է առնում խանութներից մէկը 301 րուբլով, ուսումնարանի փողով, ուսումնարանի համար։ Հասկանալի է, որ հոգաբարձութիւնն է հոգում բոլոր ծախքերը, ինչպէս օրինակ հաստատման ծախսը և այլն։

1893 թ. փետր. 16-ին հաշտարար դատարանի որոշմամբ խանութը հաստատվում է հոգաբարձու Սմբ. Աւագեանի վրա։

1894 թ. մեռնում է Սմբ. Աւագեանը առանց ուսումնարանի փողով գնած խանութը յանձնելու ուսումնարանին։ Մահվանից յետոյ խանութը անցնում է հանգուցեալի հայր Թադէոս և եղբայր Սեդրակ (այժմ հոգաբարձու) Աւագեաններին։ Երկար տարիներ սրանք խոստանում են վերադարձնել ուսումնարանին այդ կայքը, զիջելով ժողովրդի պահանջին, բայց խանութը չէ վերադարձվում ըստ պատկանելոյն, և այս ժամանակներս լսում ենք, որ խանութը ծախված է մի ուրիշին 1500 րուբլով։

Իսկ եղբ. Աւագեանների մնացած ցուցակագրված կայքը 1893 թ. յունվարի 30-ին առնում է Սմբ. Աւագեանի հօրեղբայր Աւագ Աւագեանը (որ այն ժամանակ Իգդիրի եկեղեցու կայքերի կառավարիչն էր, և մինչև այժմ ունի իր անունով, բայց եկեղեցու փողով գնած կայքեր), այսինքն երկու խանութը, տունը և այգին 200 րուբլով, որի մի խանութը, գնելուց երկու տարի յետոյ, ծախում է 600 րուբլով, իսկ մնացած կայքերից երկար տարի օգտվելուց յետոյ որոշ գումար ստանալով եղբ. Աւագեաններից՝ վերադարձնում է։

Այսպիսով ուսումնարանի 1397 րուբ. կապալական թերթը ոչնչանում է, ուսումնարանը ոչինչ չէ ստանում, իսկ եղբ. Աւագեանները հասնում են դառն աղքատութեան։

1895 թ., ուսումնարանների փակումից յետոյ, հոգաբարձու Աւետիս Սուսանեանը ուսումնարանի կշռոցը տալիս է Թադէոս Աւագեանին կապալով, իսկ այս վերջինս խոստանում է կապալավարձից մի որոշ գումար յատկացնել ուսումնարանի փակումից յետոյ դուրս մնացած ուսուցիչների ռոճիկի վճարմանը (որից Աւետիք Ահարոնեանի 40 րուբլին մինչև այժմ չէ վճարված), նախապէս ստանալով Սուսանեանից 100 րուբլու ստացական։ Երկար ժամանակ Աւագեանը փողը չը վճարելուն համար՝ Սուսանեանը դիմում է հաշտարար դատաւորին։ Դատի ժամանակ երևում է, որ այդ 100 րուբլու ստացականը կեղծված է և շինված 300 ր.։ Սուսանեանը տեսնում է, որ բանը վատ տեղ է հասնելու, մի քանի անձեր միջամտում են և գործը հաշտութեամբ վերջացնում, զիջելով ուսումնարանի 200 ր.։

Յակոբ Հայրապետեան

ԳՐԱԳԷՏՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ*)

(Երկրորդ օր)

Պետերբուրգ, 23 ապրիլի

Այսօրվայ նիստը չափազանց հետաքրքրական էր իր բովանդակութեան կողմից։

Գ. Գրադօվսկին ամբիոն բարձրանալով դասախօսում է թերթի աշխատակիցների պատասխանատւութեան մասին օրէնքի և դատարանի առաջ։

«1848 թւականից,—ասում է նա,—մինչև վերջին ազատագրական շարժումը՝ բոլոր գրողներս անմիջական կախում ունէինք ցենզուրայից, մինչդեռ այսօր յօդուածի ամբողջ պատասխանատւութիւնն ընկնում է խմբագիրների, հրատարակիչների և ապա տպարանի ու մի զոյգ ապագայում և՝ գրաշարների վրա, մինչդեռ նրանք ոչ մի բանում մեղաւորներ չեն։

«Ես թէև խմբագիր չեմ, բայց և այնպէս՝ սրանով առաջարկում եմ համագումարին՝ ուշադրութիւն դարձնել այդ հանգամանքի վրա և մի որևէ որոշումով միջնորդել կառավարութեան առաջ, որ ներկայ հեղինակի իրաւունքների մէջ, որոնք շուտով հաստատվելու են Պետական Խորհրդի կողմից, մտցվի մի այնպիսի կէտ, որով ամեն մի յօդուածի պատասխանատւութիւնը այսուհետեւ ընկնի բուն յօդուածի հեղինակի վրա։

«Սրանով,—շարունակում է նա,—ձեռք կը բերվի այն առաւելութիւնը, որ թղթակիցները հեռու կը մնան զրպարտութիւններից, կոռեկտութիւնը օրէնք կը դառնայ նրանց համար, իսկ հակառակ դէպքերում՝ թերթը և տպարանը կազատվեն այսօրվայ աւերմունքներից...»։

Այս առաջարկին միանում է Վ. Վօդօվօզօվը։

Մինչդեռ միւսների կողմից մեծ վիճաբանութեան է հանդիպում։

Հակառակորդները, ի միջի այլոց, շեշտում էին, որ խմբագիրների ապահովութեան այդ ձևն արդէն կայ, որովհետև շատ յաճախ, երբ խմբագիրը համաձայն չէ լինում մի որևէ յօդուածագրի հետ, տպում է և ասում թէ՝ «պատասխանատւութիւնը ամբողջապէս թողնում ենք նրա վրա»։

Վիճաբանութիւնները վերջանում են նրանով, որ համագումարն ընտրում է 4 հոգուց բաղկացած մի մասնաժողով՝ այդ խնդրի վերջնական ձևը մշակելու համար։

Մասնաժողովի մէջ մտնում են՝ 1) Գ. Գրադօվսկին, 2) Վ. Վօդօվօզօվը, 3) Եա. Կօլուբօվսկին, 4) Ֆ. Լօբեդևը (Սամարայի ներկայացուցիչ)։

Երկրորդ դասախօսութիւնը «հեղինակի իրաւունքների» մասին էր, որ կարդաց Վ. Վօդօվօզօվը։

Իր միժամեայ դասախօսութեան մէջ (ուրիշներին մաքսիմում կէս ժամ էր տրվում) նկարագրեց մեզ այդ իրաւունքների պատմութիւնը Եւրօպայում և մեզանում ու մատնանշեց այն հանգամանքի վրա, որ հեղինակի իրաւունքները մօնօպօլիզացիայի ենթարկվելով նրա ժառանգների կողմից՝ գրական աշխարհը մի շարք տասնեակ տարիների ընթացքում զրկվում է նրա քնարից։ «Այսպէս օրինակ,—ասում է նա,—Պուշկինը, Գօգօլը, Լերմոնտովը և այլն՝ 50 տարի շարունակ անյայտ էին ժողովրդից, և այն ժամանակ միայն, երբ անցնում է այդ դարաշրջանը և դրանով էլ ոչնչանում ժառանգների իրաւունքները, շուկայ են հանվում միլիօնաւոր օրինակներ և ապա միայն ժողովուրդը սկսում է ճանաչել իր երգչին»։

Իրաւունքների մօնօպօլիզացիան ունի և այն վնասակար հետևանքները, որ մի քանի հեղինակներ չեն կարողանում ապրել 50 տարի շարունակ, որովհետև նրանց գրիչն այնքան տաղանդաւոր չէ լինում, բայց հրապարակ են հանվում իրանց կենսական ինքնուրոյնութիւնը կորցնելուց յետոյ...

Չէ համաձայնվում այդ թէզիսների հակառակորդների հետ, թէ հեղինակի ժառանգները սովամահ կը լինեն հակառակ պարագայում, «որովհետև,—ասում է նա,—մեռան Պուշկինը, Լերմոնտովը, Գօգօլը. նրանց ժառանգները կէս դար գրաւեցին այդ իրաւունքները, բայց և այնպէս նրանք ապահովվել չը կարողացան, որովհետև որպէս մօնօպօլ ապրանքներ լաւ չէին հրատարակվում և շատ էլ թանգ էին»։

Այս տեսակէտից նա 50 տարին շատ շատ է համարում և առաջարկում է 30 տարի։

Կանգ առնելով թարգմանական իրաւունքների վրա Վ. Վօդօվօզօվը գտնում է, որ այստեղ էլ մօնօպօլիզացիան վնասակար դեր է կատարում։

---

*) Տես «Մշակ» № 92.

«Լ. Անդրէեվի և Մ. Գորկիի գրուածքները,—ասում է նա,—համաշխարհային շուկայում մօնօպօլիզացիայի են ենթարկվել, իսկ Կօրօլենկօյինը ոչ. և մենք Գերմանիայում հանդիպում ենք վերջինիս գրուածքներին աւելի լաւ թարգմանված, աւելի շքեղ հրատարակված և աւելի մատչելի գներով, քան Անդրէեվինը և Գօրկիինը։ «Այս տեսակէտից, ուրեմն, թարգմանութեան ազատ իրաւունքն էլ առիթ է տալիս հեղինակին լաւ թարգմանելու (որովհետև ասպարէզը մնում է կօնկուրենցիային), շքեղ հրատարակելու և մարդկութեան լայն խաւերի մէջ տարածելու»։

Այսպիսով ահա բացատրելով մեզ հեղինակի իրաւունքների նշանակութիւնը, յանուն գրականութեան զարգացման պաշտպանում է վերոյիշեալ ազատ, բաց դռների սկզբունքները՝ ընդդէմ մօնօպօլիզացիայի։

Ուշ լինելու պատճառով, վիճաբանութիւնները յետաձգվում են հետևեալ նիստերին։ Մ. Աղեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 1 մայիսի

Նախագահում է իշխան Վօլկօնսկին։

Սօցիալ-դեմօկրատները և աշխատաւորականները նիստին եկել են կարմիր բանտոնակներով։

Քննվում է ծառայողների նօրմալ հանգստի օրինագծի 5-րդ յօդուածը, որ իրաւունք է տալիս առևտրին սպառնացող դժբաղդ դէպքերում ծառայողներին աշխատեցնել որոշված ժամանակից աւելի։

Պօկրօվսկի 2-դը ընդդէմ է, որ դումայական մեծամասնութեան ներկայացուցիչները աշխատում են ներկայացնել մի այնպիսի նախագիծ, որպիսին, ասես, օրէնսդրական ատեբերի կողմից ընծայ լինի բանւորներին մայիսի 1-ի առիթով, սակայն սօցիալ-դեմօկրատները հարկաւոր են համարում ասել պրօլետարիատին՝ «վախեցէք շնորհողներից, եթէ նոյնիսկ նրանք քեզ ընծաներով մօտենան»։ Այդ նախագծութեան ճշմարտութիւնը ապացուցվում է նախագծի ամեն մի տառով։ Ըստ երևոյթին, քննվող 5-րդ յօդուածը ներկայանում է վերին աստիճանի տենդէնցիօզ. օգնութիւն հասցնելը մօրալի պահանջ է և նրան չէ կարելի առնչել քրէական օրէնքին։ Վերջում հռետորը յայտնում է, որ ազատ աշխատանքի իսկական պայմաններ կը տայ միայն սօցիալիզմը. այդ նպատակին պրօլետարիատը կը հասնէ սոսկ կռւով (ծափ.)։

5-րդ յօդուածի դէմ խօսում են Պրետկալնը եւ Պետրօվ 3-րդը, որ յայտնում է, թէ աշխատաւորականները ձայն են տալու 5-րդ, 6-րդ, 7-րդ յօդուածների դէմ, որոնք ծանր բեռ են գործակատարների համար։

Յօդուածը պաշտպանում են Գուլկին և կոմս Բօբրինսկի 1-ին։

Ի վերջոյ 5-րդ յօդուածն ընդունվում է հայր Մաշկեվիչի առաջարկած ուղղումով, որ յօդուածի մէջ յիշվեն պատահական հեղեղների, հրդեհների դէպքեր և այլն։

8-րդ յօդուածը, որ խօսում է երկու ժամեայ հանգստի մասին օրվայ աշխատանքի մէջ, թեժ վիճաբանութիւններից յետոյ, ընդունվում է բարօն Տիզէնհաուզէնի ուղղումով, որի համաձայն եթէ աշխատանքը տևում է ութ կամ պակաս ժամ, ընդմիջումի համար տրվում է կէս ժամ, 9 և 10 ժամվայ աշխատանքի դէպքում—մի ժամ, իսկ 12 ժամից աւելի բանւորական օրվայ մէջ տրվում է հանգստութեան համար 2 ժամ։

Ընդմիջումից յետոյ նախագահում է Գուչկօվը։

Պուրիշկեվիչը աւելի քան հարիւր անդամի կողմից անում է հետևեալ յայտարարութիւնը. «Լրագրական տեղեկութիւններից մենք իմացանք, որ Դումայի նախագահի անունով երկու յայտագրեր են ստացվել օտարազգիներից—մէկը՝ Անգլիայի Նիւկեստլի առևտրական պալատից, միւսը՝ Բէլգիայի սենատօրների և պատգամաւորների պալատի կողմից—ֆինլանդական հարցի մասին։ Ընդունելով որ ամեն մի օտարազգի միջամտութիւն մեր ներքին տնային գործերում, եթէ Դումայի կողմից չը հանդիպի կտրուկ ու անմիջական դիմադրութեան, կարող է պակասեցնել մեր ազգային արժանապատւութիւնը, մենք առաջարկում ենք, եթէ յիրաւի այդպէս բան եղել է, խնդրել Դումայի նախագահին՝ վերադարձնել պարոնայք անգլիացիներին և բէլգիացիներին նրանց անտեղի միջնորդութիւնները Ֆինլանդիայի մասին, ցոյց տալով ուղարկող պարոններին նրանց վարմունքի անվայելչութիւնը և նրանց կողմակի միջամտութեան անօգուտութիւնը»։

Նախագահը մատնանշում է, որ նակազի համաձայն օրակարգից դուրս վիճաբանութիւններ արգելվում են։

Քննվում է 8-րդ յօդուածի վերաբերութեամբ աշխատաւորականների արած լրացումը այն մասին, որ ծառայողները պարապմունքներից ազատ ժամանակը նստեն և կարդան, որի համար ամեն մի խանութում լինելու են ծառայողների թւին համապատասխան նստարաններ։

Աջակողմեանների պահանջմամբ 8-րդ յօդուածը դուրս է ձգվում նախագծից։

Այնուհետև տաք վիճաբանութիւններ են ծագում 9-րդ յօդուածի շուրջ, որ ճառում է տօն օրերի և կիրակնօրեայ հանգստի մասին։

Վիճաբանութիւնների ժամանակ կարդացվում է աջակողմեանների և նացիօնալիստների հարցապնդումը՝ բարձր դպրոցի իրերի դրութեան մասին։ Յայտնված է շտապողականութիւն։

Զամյսլօվսկին մատնանշում է, որ աջակողմեանները վաղուց ի վեր կամենում էին բանալ բարձր դպրոցի պալատները, օգտվելով ամեն առիթից, օրինակ բիւջէտային վիճաբանութիւններից։ Հռետորը, զարմանալով որ հրապարակային ազգաբութեան երդուեալ պաշտպաններ ձախակողմեանները հակառակում են այդ խոշոր կարևորութիւն ունեցող հարցի բացայայտութեանը, պնդում է ընդունել շտապողականութիւնը, որպէսզի հարցը վճռվի մինչև ամառային արձակուրդները (ծափեր աջից)։

Կապուստին առաջարկում է հարցապնդումը յանձնել յանձնաժողովի, քանի որ ուրոյն ցուցմունքներ չը կան իշխանութիւնների անգործութեան մասին։

Գեգեչկօրին պաշտպանում է շտապողականութիւնը, մատնանշելով որ հարցապնդումը հանդիսանում է այն քամհեցուցիչ արշաւանքի ծնունդ, որ աջակողմեանները սկսել են ուսանող երիտասարդութեան դէմ։ «Յայտնի է,—ասում է հռետորը,—որ մինիստրութիւնը մշակել է համալսարանական նոր կանոնադրութիւն, և ահա, այդ կանոնադրութեանը օրէնսդրական սանկցիա տալու համար, նրա ճանապարհը բանալու համար, հաւանօրէն չաղ վարձատրութեամբ աշխատում են Պուրիշկեվիչը և նրա կողմնակիցները։

Աջակողմեան աթոռներում բարձրանում է աղմուկ, լսվում են ձայներ՝ «դուրս, հայդա, թոյլ չենք տայ խօսել»։ Մի փոքր ժամանակ հռետորը հնարաւորութիւն չունի ճառը շարունակել։ Նախագահը խնդրում է կարգ պահպանել, նախազգուշացնելով որ հակառակ դէպքում ստիպված կը լինի նիստը փակել։

Վերջում Գեգեչկօրին առաջարկում է Դումային ընդունել աջակողմեանների հրաւէրը, «որպէսզի ապացուցվի քաղաքական բովանդակ ոչնչութիւնը այն մարդկանց, որոնք ննգամիտ կերպով թքում են այն ամենի վրայ, ինչ որ ազնիւ է ու անկաշառ Ռուսաստանում» (ծափահարութիւն ձախից)։

Բուլատը կողմնակից չէ շտապողականութեան, գտնելով որ մարտահրաւէր չը կայ. հերթին դրված են աւելի կարևոր ու անյետաձգելի խնդիրներ։

Շտապողականութիւնը 104 ձայնով ընդդէմ աջակողմեանների, նացիօնալիստների և սօցիալ-դեմօկրատների 78 ձայների՝ մերժվում է։

Նախագահը կարդում է համայնքների պալատի հեռագիրը, որով շնորհակալութիւն է յայտնվում Դումային Էդուարդ թագաւորի մահվան առիթով ցաւակցելուն համար։

Հեռագրի ընթերցման ժամանակ աջակողմեանները բողոքի բացագանչութիւններով հեռանում են դահլիճից, մինչ կենտրոնը և ձախակողմեանները ծափահարում են։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մենք ստացանք Շուշուց հետևեալ հեռագիրը մայիսի 2-ից. «Այսօր մի քանի հարիւր հոգուց բաղկացած ժողովուրդը, հաւաքվելով առաջնորդարանի բակում, պահանջեց այստեղ եկած Մեսրոպ եպիսկոպոսից տալ բացատրութիւններ, թէ որոնք են պատճառները Բենիկ վարդապետի անարդար արձակման իր պաշտօնից։ Ժողովուրդը գոհ չը մնաց Մեսրոպ եպիսկոպոսի տուած բացատրութիւններից և արտայայտեց նրան վրդովմունք և բողոք։ Ղոնդաղսազեան, Տէր-Մինասեան, Տէր-Յովհաննիսեան և այլք»։

◆ Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Գայիանեան օրիորդաց ուսումնարանի վարչութիւնը յայտնում է իր շնորհակալութիւնը Տիգրան և Իսահակ Վարդանեաններին, որոնք նուիրեցին դպրոցիս օգտին 200 ր. իրանց հանգուցեալ հօր՝ Գերասիմ Վարդանեանի յիշատակին։ Միաժամանակ նոյն ուսումնարանի վարչութիւնը քաղցր պարտականութիւն է համարում յայտնել, որ ստացել է հանգուցեալ բժիշկ Գ. Բիւչարեանցի այրուց և որդուց 25 ր. յօգուտ դպրոցական շէնքի»։

◆ Գանձակում հիմնվել է «գրականութեան ու գեղարուեստի սիրողների ընկերութիւն», որի նպատակն է տալ մի այնպիսի ժողովածու, որի մէջ արտացոլված լինի ըստ հնարաւորութեան լիակատար և և բազմակողմանի կերպով Անդրկովկասի կեանքը՝ լաւագոյն գրականական արտադրութիւններով։ Ժողովածուն մտադիր է տալ նաև Անդրկովկասի կենցաղի, կարևոր պատկերը։ Այս նկատումներով մրցութեան են հրաւիրվում Անդրկովկասի գրական ոյժերը, որոնք կարող են գրուածքներ ներկայացնել ռուսերէն, հայերէն, վրացերէն և թուրքերէն։ Լաւագոյն գրուածքի համար մրցանակ են տրվելու ընկերութեան հինգ ժէտօններ և գովասանական թղթեր։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը Պարիզի Լիոնէ բանկից Պետերբուրգի Վոլժսկօ-Կամսկի բանկի միջոցով ստացաւ 100 հազար ռուբլի՝ ի հաշիւ 3 միլիօն ռուբլու փոխառութեան։

◆ Ապրիլ ամսի ընթացքում Կ. Հ. Բ. Ընկ. ընթերցարանն են յաճախել ընդամենը 1706 հոգի, որոնցից տղամարդիկ 607, կանայք 45, աշակերտներ 884 և աշակերտուհիներ 170։ Գրադարանի նոր բաժանորդ են գրվել 31 հոգի։ Տրված է ընթերցարանում կարդալու համար 242 գիրք, իսկ գրադարանի բաժանորդներին 656 գիրք։

◆ Մայիսի 2-ին Թիֆլիս ժամանեց գաղտնի խորհրդական Ն. Մ. Ռէյնկէ, կառավարիչ սենատի օբէր-պրօկուրօրը, որ նշանակված է Թիֆլիսի դատաստանական պալատի շրջանի դատական հաստատութիւնների վերաքննութիւնը կատարելու համար, և նաև այլ պաշտօնեաներ։ Վերաքննիչին դիմաւորեցին Թիֆլիսի դատաստանական պալատի գլխաւոր նախագահը և պրօկուրօրը, Թիֆ. ոստիկանապետ գնդապետ Զասիպկինը և ուրիշները։ Գ. Ռէյնկէն իջևանեց «Լօնդօն» հիւրանոցում։

◆ Մայիսի 2-ին Բագուի գնացքով ժամանեց Թիֆլիս Պետերբուրգի ճապօնական դեսպանութեան զինւորական կցորդ՝ ճապօնական զօրքի գնդապետ Խօչկօ Սօսկալի և իջևանեց «Լօնդօն» հիւրանոցում։

◆ Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը շնորհակալութիւն է յայտնում հանգուցեալ Յով. Սօլ. Ղորղանեանի ժառանգներին, որոնք նուիրել են ընկերութեանը 50 ռուբլի հանգուցեալի յիշատակին գրքեր հրատարակելու համար։

◆ Ալեքսանդրապօլցի Յակոբ Կարանեանը ցանկութիւն է յայտնել իր հնութիւնների հարուստ ժողովածուն (10,000 ռուբլուց աւելի արժեցող) նուիրաբերել Թիֆլիսի Հայոց Ազգագրական Ընկերութեանը, երբ վերջինս իր սեփական շէնքը ունենայ։

◆ Կովկաս է ճանապարհվել ռուսաց սինոդի օբէր-պրօկուրօր Լուկեանովը պաշտօնեաներով։

◆ Ամերիկայից ստացվող յուզալից լուրերը՝ բամբակի բերքի անաջողութեան մասին այս տարի՝ ազդեցութիւն են գործում Մօսկվայի շուկայի վրայ։ Առանց այն էլ բարձր գները օրէ-ցօր աճում են 5—10 կօպէկով և ապրիլի 28 ին հասան 17 ր. 20 կօպ. պուդը՝ ամերիկականի։ Զուգընթացաբար աճում են և տեղական բամբակի գները. Ֆերգանայի բամբակը արժէ 16 ր. 90 կ.։ Եւ քանի որ տեղական բամբակը չէ բացւում արդիւնագործութեան պահանջին, լրացնելով նրա մի-երրորդականի չափը, ապա ամերիկական բամբակը որոշում է ներքին շուկայում և տեղականի գները։ Այժմեան դրութիւնը շուկայում շատ ձեռնտու է տեղացի արտադրողների համար։ Դժբաղդաբար անմիջական արտադրողները քիչ կօգտվեն գների բարձրանալուց, քանի որ կրեդիտի պակասութեան պատճառով նրանք վաղօրօք ծախում են ֆիրմաների ներկայացուցիչներին, և բոլոր օգուտը կը մնայ այդ միջնորդներին։

◆ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան կողմից Գ. Միրաղեանի յօբելեանին լինելու է ներկայացուցիչ ընկերութեան խորհրդի որոշմամբ խորհրդի անդամ Զ. Մամուլեանը, իսկ Հայոց Դրամատիկական Ընկերութեան կողմից ընկերութեան որոշմամբ լինելու են Բաբայեան Լ., Նազարէթեան Արամ և Տէր-Գրիգորեան Յ.։

◆ Ժամանակաւոր զինւորական գեն.-նահանգապետի կարգադրութեամբ ապրիլի 27-ից Թիֆլիս քաղաքի բնակիչներ՝ Նարմէն Ծխաքաձէն և Աւետիք Շահնազարեանը առանց թոյլտւութեան զէնք կրելու և պահելու համար և Ալէքսանդր Վարդանեան ուրիշի անցագրով ապրելուն համար տուգանքի են ենթարկված՝ առաջինը 500 ր. կամ 3 ամիս բանտարկութեան, երկրորդը 500 ր. կամ 2 ամիս, վերջինը 1000 ր. կամ 3 ամիս բանտարկութեան։

◆ Արդէն ձեռնարկված է Թիֆլիսի ռէալական դպրոցի սեփական շէնքի նախապատրաստական աշխատանքներին։ Կառուցման նախահաշիւն արդէն հաստատվեց մինիստրութիւնից։

◆ Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի ս. Սարգսի ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը վճռել է իր խնամքին յանձնված դպրոցում առաջիկայ ուսում. տարվանից բաց անել IV բաժանմունք։ Հարկ ենք համարում յայտնել, որ տեղական ծխական հայ դըպրոցներից ոչ մէկն այդ բաժանմունքը չունի բացի Յովնանեան-Մարիամեան և Գայիանեան օրիորդաց դպրոցներից։

◆ Վրիպակ.—«Մշակի» № 92-ում տըպված «Գրագէտների համառուսական երկրորդ համագումարը» յօդուածի հէնց ըսկզբում սպրդել է հետևեալ սխալը. տպված է՝ «Բոլորովին համապատկեր է ներկայացնում...», պէտք է կարդալ՝ «հակապատկեր»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ռուսաց դրամատիկական խումբը Կրուչինինի և Մ. Մարտովի ղեկավարութեամբ շաբաթ, մայիսի 1-ին ներկայացրեց «Կեսար և Կլէօպատրա» պատմական պիէսը, 5 գործողութեամբ և 7 պատկերով, հեղինակութիւն Բ. Շօուի։

Պիէսը պատկերացնում է հռոմէական տիրապետութեան այն շրջանը, երբ Յուլիոս Կեսարը նուաճեց Եգիպտոսը հռոմէական լեգէօնների օգնութեամբ և երբ Կլէօպատրա թագուհին նրա շնորհիւ ձեռք բերեց եգիպտական գահը, խլելով թագը իր եղբայր Պտօլօմէից։

Պիէսի հերոսն է Յուլիոս Կեսարը և հերոսուհին Կլէօպատրան, մի 16 տարեկան չարաճճի, նենգ, խորամանկ և բարոյապէս փչացած աղջիկ։ Յուլիոս Կեսարը դուրս է բերված ոչ միայն իր մեծ և վեհ, այլ և ծիծաղելի կողմերով։ Պատմական ճշտութեամբ պատկերացված են և եգիպտական կեանքի մանրամասնութիւնները իր սնոտիապաշտութիւններով, նախապաշարմունքներով և ամբարտաւանութեամբ։

Յուլիոս Կեսարի դերը կատարում էր Սմիրնօվը, որ մեծ զօրապետին դուրս բերեց աւելի բերև փիլիսօփայ, քան հրամանատար։ Կլէօպատրայի դերը խաղում էր տ. Սօֆիա Զարուսկայա, բայց, մեր կարծիքով, նա շատ էր մանկական բնաւորութիւն տալիս Կլէօպատրային, որովհետև վերջինիս կատարած չարագործութիւնները ցոյց էին տալիս, որ նա թէև 16 տարեկան է, բայց արդէն ապրել է և ընտելացել ոճրագործութեան։ Մանուկ թագաւոր Պտօլօմէի խնամակալ Պօտինի դերը կատարում էր Մարտովը, որ պատկերացրեց հայրենասէր եգիպտացու տիպը, որ ատում էր հռոմէական «բարբարոսութիւնը» և ողբում իր հայրենիքի անկումը։

Դեկօրացիաները, զգեստները՝ թէ հռոմէական և թէ եգիպտական՝ մեծ հմտութեամբ էին պատրաստված և հանդիսականները, արդարև, իրանց տեղափոխված էին զգում մեզանից մօտ 2000 տարի առաջ եղած կեանքի մէջ։ Հ. Ա.

Կիրակի օրը Հաւլաբարի «Նոր-Դրամա» թատրոնում սիրողների խումբը խաղաց Րաֆֆիի «Զահրումար» վէպից Մ. Գուլազեանի վերածած համանուն պիէսը։

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Նկարիչների Փոխադարձ Օգնութեան Ընկերութիւնը բացել է իր ցուցահանդէսը։

Այս անգամ այդ ցուցահանդէսը համեմատաբար այնպէս հարուստ չէ, ինչպէս անցեալ տարիները։ Մասնակցում են 31 հոգի, որոնք հանդէս են դրել մօտ 90 գործ։

Նկարիչների մեծագոյն մասը հին ծանօթներ են։

Նկարների մէջ կան բաւական աջողվածներ։ Մեծամասնութիւնը բաղկացած է միջակ գործերից։

Լեռնային տեսարանների և մանաւանդ սառցապատ և ձիւնապատ լեռների պատկերացնող Զանկօվսկին և այս անգամ հրապարակ է հանել բնորոշ նկարներ, թւով 12։ Զանկօվսկին հաւատարիմ է իր վրձինին։ Նա գեղեցիկ պատկերացնում է ձիւնաշող և սառցաձև գագաթները և նրանց ծերպերի նոսր և նրբագոյն օդաշերտերը։ Բայց երբ նա ցանկանում է շաղկապել գագաթի բնութիւնը աւելի ստորադիր գօտիների բնութեան հետ,—միշտ միակերպ աջողութիւն չունի։ Կովկասեան մեծ շղթայի տեսարանները աւելի հարազատ են, քան միւս տեղերի։ Արարատը դուրս է եկել ոչ այն արտայայտութեամբ, որ յատուկ է այդ լեռնասիւնին Արաքսի աւազանի հօրիզօնում։

Զօմմերը բեղմնաւոր է և այս անգամ. նա հանդէս է դրել 31 նկար։ Ամենախոշոր պատկերն է «Շախսէյ-վախսէյը»։ Մի այդպիսի պատկեր նա ցուցադրել էր անցեալ անգամ։ Այժմ նոյն թեման մշակված է փոքր փոփոխութեամբ։ Պատկերն արտայայտիչ է, բայց ըստ երևոյթին դեռ չէ վերջացած։ Միւս պատկերները, որոնք ներկայացնում են միջին ասիական տեսարաններ, արևելեան շուկայ, մզկիթ, կարաւանների և դրանց նման նկարագիրներ, գրաւում են այցելուի տեսութիւնը. բայց նրանք ամեն անգամ լիակատար գոհունակութիւն չեն սնդում մարդու մէջ։ Մի քանիսի մէջ պակասում են խորութիւն և բովանդակութեան կենսունակ գծեր։ Բացի այդ կովկասեան և միջին ասիական պատկերներից, լեռնային և տափարակային բնութեան մէջ յաճախ մենք տեսնում ենք միօրինակ արեգակնային փայլի և ստուերների արտայայտութիւն։ Զօմմերը տուել է և ջրանկարներ։ Զօմմերի պատկերները շարժում են հետաքրքրութիւն իրանց արևելեան դրոշմով և գրաւում են այցելուի ուշադրութիւնը։

Միրզօյեան ներկայացրել է հինգ նկար։ Աջողված է Ալգեթից վերցված տեսարանը, վրանների նկարագիրը լեռնակողի վրայ։ Վերջին նկարը վերցված է Լոռու բնութիւնից։ Ջրվէժի պատկերի մի մասը աջողված է, միւսը կարօտ է լրացման։

Նադուրսկին հանդէս է դրել 12 նկար, Նադուրսկին նկատելի առաջադիմութիւն է արել անցեալի հետ համեմատած։ Աջողվել են անտառային տեսարանները։ Պակասութիւն պէտք է համարել ծառերի չափազանց յղկված, ողորկված արտայայտութիւնը։

Սիդօրենկօյի պատկերները գործում են վարպետի ձեռքի արդիւնքների տպաւորութիւն։ Նրա պաստելանկարները մեծ մասամբ աջողված են։

Նկարչուհի Շուլցի նկարները գրաւում են ուշադրութիւն։ Նա սիրում է նկարել գնչուհիների։ Հինգ նկարներից ամենաաջողն է № 84-ը, որ ներկայացնում է տօնախմբութեան շնորհաւորութիւնը։

Պաեվսկին փորձել է հանդէս դնել մի բարդ պատկեր՝ «Քութայիսի շուկան»։ Գործը հետաքրքրական է և ունի աջողված կտորներ, բայց գործում է անկատար նկարի տպաւորութիւն։

Քանդակագործ Միքայէլեան հանդէս է դրել վեց քանդակներ՝ մրգավաճառի, մշակի, կօզակի, գոմէշի և մարդկանց արձաններ։ Սիրող

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 3 մայիսի

Խոնարհաբար խնդրում եմ ուղղել հետևեալ սխալը։

Երէկ «Մշակի» լուրերի բաժնում յայտնված էր, որ թոյլատրված է խաղալու Ս. Տիրացեանի «Սօկրատ» դրաման և այլն։ Հեղինակի ազգանունը շփոթված է, որովհետև «Սօկրատ» դրաման (5 գործ. և 9 պատկերով) իմ ինքնուրոյն աշխատութիւնն է, որի վրայ ահա ամբողջ 2 տարի աշխատում եմ ու այս շաբաթ եմ թոյլտւութիւն ստացել բեմ դնելու։ Տիրացեանը ոչ մի կապ չունի այդ պիէսի հետ։ Սեդրակ Թառայեան

«Ւ»-Ն ԵՒ «Վ»-Ն ՕՏԱՐԱԽՕՍ ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Ուսուցիչ եմ Եդեսիա աւանում և, դժբաղդաբար, ուսուցիչ հայոց լեզուի մի տեղում, ուր խօսակցական լեզուն թուրքերէն է, ուր երեխան դպրոց մտնելիս ոչ մի խօսք չը գիտէ հայերէն։ Ու հակառակ մեր իսկ ցանկութեան և մանկավարժակ. միանգամայն գծված սկզբունքի, որ ասում է, թէ «սկզբնական կրթութիւնն ու ուսուցումը պէտք է տանել մայրենի լեզուով», մենք՝ օտարախօս հայ վայրերի ուսուցիչներս՝ անկարող ենք և ստիպված ենք լինում երեխայի համար օտար հայերէնը պատուաստել ու անցնել առաջին տարվանից որպէս մայրենի լեզու։ Այդպիսի ուսուցիչների առաջ հազարաւոր դժուարութիւններ են կանգնած, որոնցից ազատ են մեր այն պաշտօնակիցները, որոնք հայախօս վայրերում են պաշտօնավարում։ Նրանց տարակուսանքի մէջ չէ ձգում լեզուի հարցը. նրանց առաջ, թէև քիչ պաշարով, բայց և այնպէս նստած են այնպիսի երեխաներ, որոնց կարելի է բան հասկացնել որոշ օրինակներով։ Այբուբէնի կարգն անցնելիս՝ նման հնչիւններն ու բարդութիւնները թերևս այնքան տանջանք չը պատճառեն ուսուցչին և աշակերտին, որքան պատճառում են օտարախօս վայրերում։ Մի կողմ թողնելով միւս բազմաթիւ դժուարութիւնները՝ դառնում եմ դրանցից մէկին, որը նոյնպէս ոչ պակաս նշանակութիւն ունեցողներից է և որն արդէն հրապարակ է դրված ու սպասում է մանկավարժական ու ընթերցող հասարակութեան այս կամ այն վճռին, որն առանձնապէս աւելի մեծ նշանակութիւն կունենայ վերև յիշված տիպի դպրոցների համար, որոնց թիւն այնքան էլ սակաւ չէ հայ իրականութեան մէջ։

Դա ւ-ի և վ-ի պայքարն է։ Մի կողմ կանգնած են լեզուի աւանդական կարգի նախանձախնդիրներն իրանց պատճառաբանութիւններով, միւս կողմը՝ մի բուռն մարդիկ, որոնք իրանց կաշու վրայ են փորձել այդ աւանդական շարքը պահպանելու դժուարութիւններն ու անհեթեթութիւնները։

«Կորչում է այբուբենի աւանդական մեսրովբեան աստուածապարգև ու դարերով գործադրված կարգը։ Նորամուտ կոշտ ու կոպիտ տառերը դուրս են քշում հներին, որոնցով գրել են մեր երանելի հայրերն ու պապերը։ Հարկաւոր է պահել, ամուր պահել հինը. եթէ կարիք կայ դուրս նետվելու, թող դա լինի օտար ու կոպիտ վ-ը, եթէ նա նոյնիսկ աւելի յարմար էլ լինի. ւ-ը թող աւանդվի մատաղ սերնդին, որքան էլ որ դժուար լինի ու կանոններով հարուստ։ Պլոկեցէք երեխաների կաշիներն ու սովորեցրէք, լցրէք գլուխները կանոններով ու վարժութիւններով։ Հոգս չէ, մենք էլ ենք մեր ժամանակին շատ չարչարանք կրել ւ-ի ձեռքից»... Այսպէս պէտք է հասկանալ առաջին—հինոֆիլ—բանակի գլխաւոր պատճառաբանողների փաստաբանութիւններից։

Մի հնչիւն երկու նշանագրող տառ չէ կարող ունենալ. այդ է թելադրում հնչական մեթոդը նոյն մեթոդով անցնող ուսուցիչներին ու մանկավարժներին։ Այլապէս առաջ կը գայ երեխաներին անմատչելի և վաղաժամ՝ բազմաթիւ կանոնների ու բացառութեանց մի ահագին շարք, որի բանալին ու ելքը շատ անգամ հասակաւոր ու սովորած մարդիկ էլ չեն կարողանայ գտնել։ Որքան հնչիւն՝ այնքան էլ տառ, և որքան կարելի է՝ տարբեր ձևերով, որպէսզի շփոթութիւն չառաջացնեն ու պատճառ դառնան խառնելու։ Այդ բանն աւելի զգալի է և կարևոր օտարախօս հայ դպրոցների համար, ուր հայերէն խօսել չը գիտենալը պատճառ է դառնում սխալը որպէս ուղիղ ընդունելու և գործադրելու։

Լեզուն էլ է ենթարկված էվօլիւցիայի և նրա հետ էվօլիւցիայի են ենթարկված և նրա բաղադրիչ մասերը՝ հնչիւնները։ Հետևապէս և պէտք է փոփոխվի հնչիւնները արտայայտող պայմանական գծակերպումը, այսինքն տառերը և նրանց տեղադրութիւնը։ Դուրս նետել աւելորդները, հնացածները, նախկին կորած հնչիւն արտայայտողը, ընդունել նորն ու կարևորը։

Չէ կարելի երեխային սովորեցնել Ոսկեդարում խօսված լեզուն, նոյնպէս և գրել տալ ու սովորեցնել այդ լեզուի հնչիւններն ու տառերը։ Հնացել են և աւելորդ են դարձել, ուրեմն և պէտք է փոխել և, եթէ կարիք կայ, նորերն ստեղծել։ Իսկ եթէ կայ մի հնչիւն արտայայտող երկու գիր, ընտրել ամենայարմարն ու պարզը, որը տեղիք չը տար բազմաթիւ կանոնների ու վարժութիւնների դպրոցական հէնց առաջին տարվանից։ Չէ՞ որ նոյն կերպ փոխվել են աւ-ն ու փ-ն ու դարձել օ և Ֆ։

Իսկ թէ այդ փոփոխելը որքան է օժանդակում, այժմ այդ ամենքս կը խոստովանենք. խոստովանենք և այն, որ վերջին առաջարկված ւ-ի և վ-ի հարցն էլ նոյնպիսի երախտագիտութեան պիտի հանդիպի ապագայ սովորող սերնդի կողմից։

Բայց այդ երկու գրերից մէկը տալ յարմար անունն ու պահել։ Անկասկած վ-ին՝ կասի նա, ով տեսել է ւ-ի հետ կապված բազմաթիւ դժուարութիւնները։ Ճիշդ է, շատ լեզուներում կան ըստ երևոյթին մի հնչիւն արտայայտող տառեր, ինչպէս գերմաներէնում v և w, բայց նախ դրանք այնքան էլ միահնչիւն չեն, այսինքն առաջինը կիսած է՝ իսկ երկրորդը՝ վ, և երկրորդ՝ դրանցից և ոչ մէկը չունի այն կախարդական զօրութիւնը, որ դրվելով ուրիշ տառերի մօտ՝ յեղափոխէ նրանց նշանակութիւնն ու հնչիւնը։ Իսկ մեր փոքրիկ ւ-ն ունի այդ զօրութիւնը, որը և պատճառ է դառնում շփոթութեանց։ Կը բերեմ իմ անձնական փորձերից, որ քաղել եմ Ղ. Աղայեանի «Արևիկ» և «Մայրենի լեզուներ» դասագրքերից, որոնցով անցնում եմ և անցել եմ։

Երկու ամիս սոսկ խօսակցութեանց միջոցով կարողացայ աշակերտներին ծանօթացնել մեր շրջապատի, իրերի, մի քանի կարևոր բայերի պարզ ձևերի, հայերէն անունների հետ, յուսալով որ նոյն կերպ շարունակելով և յետագայում դասագրքի օժանդակութեամբ կարող կը լինեմ հասնել ցանկալի նպատակիս, և սկսեցի հնչիւնները։ Շատ լաւ էր նում, հեշտութեամբ էր առաջ գնում թէ խօսակցութիւնը և թէ կարդալ-գրելու ուսուցումը։ Աշակերտները կարողացել էին վարժվել հնչիւններին, վերլուծելուն ու կապակցելուն։ 7 տառից յետոյ եկաւ ու-ն. ի հարկէ անցանք առանց բացատրելու, թէ դա կազմված է ո և ւ տառերից, թէև դժուար էլ թէ հասկանալի, վախենալով մի գուցէ շփոթեն և ու կարդալու տեղ ով կարդան. չէ՞ որ բնական է՝ ո և վ միասին կը լինի ով։ Բայց այն, ինչից խուսափում էի, ինքն իրան եկաւ։ 12-րդ տառը ու-ն էր. ցոյց տուի, տեսայ որ ստուգելիս դասագրքերում ցոյց են տալիս ու տառը և երբեմն էլ կարդալիս ու կարդում, օրինակ՝ ՇՈՒՆ, փոխանակ ՇՈւՆ։ Լեզուի չիմանալն աւելի է նպաստում սխալ կարդալուն, ի հարկէ։ Անցանք և այդ։ Եւ ահա դեռ 4 տառ չանցած՝ եկաւ և իսկական ւ-ն առանձին, Ե-ի և Ի-ի հետ, որպէս սոսկ վ հնչիւն։

«Անիւ», «տերև», «հաւ» բառերն ուղիղ կարդաց աշակերտը, բայց հէնց որ հասաւ ու-ին, նայեց ու կարդաց ով. և այդպէս արդէն սկսվեց իսկական խառնաշփոթութիւնը և շարունակ ուղղումները։ Վերջապէս մարտի 17-ին վերջին փորձութիւնն էր. իւ-ն էինք անցնում։ Անցել ենք և վ-ն ու ոսկոմ. ինչե՞ր ասես չեն կարդում. և որտեղի՞ց էլ են գտնում։ Դասն անցնում եմ ամբողջովին փոքրիկ ւ-ի բացատրութիւններով, ուղղումներով, վարժութիւններով, բայց հետևանքը նոյնն է. երեխայք գրում ու կարդում էին ու՝ փոխանակ ով-ի, կու՝ փոխանակ կով-ի, մովք՝ մուք-ի տեղ, իվղ՝ իւղի, աղիվծ՝ աղիւծի, սկիվռ՝ սկիւռի փոխարէն և այլ այնպիսի բառեր, որոնք հայախօս երեխան ինստինկտաբար գոնէ ուղիղ կը կարդայ՝ նայելով պատկերին։ Հայախօս դպրոցներում որքան էլ դժուար, այնուամենայնիւ կարելի է էլի բացատրել, հասկացնել, իսկ օտարախօս երեխային իր խղճալի հայերէնի պաշարով շատ դժուարամարս է նոյնիսկ ամենապարզ թօթովալի բացատրութիւնն անգամ։ Իսկ ապա փորձենք անցնել վ-ով՝ թողնելով ւ-ը ու-ի և իւ-ի համար՝ և կը տեսնենք, որ երեխան քանի դեռ չը գիտէ թէ ւ-ը հնչվում է և որպէս վ, նա այդ սխալները չի անի. նա սովորել է, որ կայ միայն մի վ և դա վեճն է։

Ուրեմն եթէ կայ մի գիր, որը հարկաւոր է դուրս նետել, այդ անպայման պէտք է լինի ւ-ը որպէս աւելի խանգարիչ ու շփոթող գիր։ Հարկաւոր է ունենալ առանձին նշանագիր և ու-ի ու իւ-ի համար՝ ւ-ի դժուարութիւնները մի անգամ ընդմիշտ վերացնելու։ Ողջունելով այդ կարևոր հարցի հրապարակ գալն ու հանողներին, ցանկալի կը լինէր, որ շուտով ընդունվէր ու գործադրվէր դասագրքերում, որոնց կարիքն այնպէս զգացվում է մեզնում ընդհանրապէս և օտարախօս հայ դպրոցներում մասնաւորապէս։ Դա գոնէ զգալի չափով կը թեթևացնի այդ տարապայմանութեան մէջ պաշտօնավարող ուսուցչի տաժանելի դրութիւնը, ինչպէս և կը դիւրացնի սովորող երեխաների առանց այն էլ դժուարին կացութիւնը և որոշ չափով կը հեշտացնի նրանց ուսուցումը։ Արտ. Ստամբօլցեան

Եղեսիա (Տերեկի շրջան)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒԶՎԷԼՏԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԲՐԻՒՍԵԼՈՒՄ

Ռուզվէլտը առաջին նշանաւոր օտարազգին էր, որ այցելեց Բրիւսէլի համաշխարհային ցուցահանդէսը։ Ցուցահանդէսի վարչութիւնը մի շարք դասախօսութիւններ սարքեց, որոնց սկսելու պատիւն ընկաւ Ռուզվէլտին։

Շնորհակալութիւն յայտնելով ներկայ եղողներին, որոնց թւում գտնվում էր և Ալբերտ I թագաւորը, և մատնացոյց անելով Բէլգիայի փառաւոր անցեալի, ներկայի և ապագայի վրա, Ռուզվէլտը շարունակեց այսպէս.

«Դուք բարի ճանապարհի վրա էք, որովհետև դուք վաստակաւորներ էք։ Ձեր արդիւնաբերութիւնը, ձեր առևտուրը փայլուն են աշխարհում և ձեր անունը հռչակւում են ամեն տեղ։ Դուք այդ հրաշալի հետևանքին հասաք, որովհետև դուք, բէլգիացիներդ, գործունեայ, եռանդոտ մարդիկ էք։ Ձեզանից իւրաքանչիւրը կամենում է և գիտէ աշխատել, յոյսը դնելով ամենից առաջ հէնց իր վրա։ Ի հարկէ, փոխադարձ օգնութիւնը շատ գովելի և անհրաժեշտ բան է, և այդ շատ լաւ հասկանում են մի երկրում, որի դեվիզն է՝ «միութիւնը ոյժ է»։ Սակայն Բէլգիայում նոյնպէս լաւ գիտեն, որ ուրիշին օգնելու միակ միջոցն է՝ օգնել նրան, որ ինքը դուրս պրծնի փորձանքից։ Զգուշանանք նրանցից, որոնք անդադար գանգատվում են իրանց անօգնականութեան վրա։ Այդ այսպէս անուանված անօգնականները անօգնական են մանաւանդ իրանց սեփական համարձակութեամբ, իրանց ինքնասիրութեամբ։ Բէլգիացին դուրս է գալիս դժուարութիւններից առանց երէժիականների, առանց աղերսանքի՝ իրան, իր կնոջը և իր մանուկներին նպաստելու մասին։ Մի խօսքով, յոյս մի դնէք ձեր հարևանի վրա, թէ նա կօգնի ձեզ։ Իմացէք, որ միայն ձեր սեփական ոյժերով դուք կարող էք ձեր բարօրութեանը հասնել։

«Ես այն ծայրայեղութեանը չեմ հասնի, որ ասեմ, որ եթէ մարդն ընկնում է, չը պէտք է գնալ և օգնել նրան։ Բարձրացրէք նրան, եթէ կարող էք։ Սակայն ինչ կարող էք այն մարդուն անել, որը պառկում է և որի ծուլութիւնը ստիպում է պառկած մնալ։ Իւրաքանչիւր մարդ պէտք է աշխատի իր համար, իր կնոջ համար, իր մանուկների համար։ Իսկ երբ նրա մանուկների ապագան ապահովված է, նա պէտք է նուիրի իրան հասարակական բարիքին, ընդհանուր բարօրութիւնը բարձրացնելուն։ Այստեղ մի խորհուրդ կայ։ Ես ողջունում եմ արդարութեան թագաւորութեան գալուստը, բայց զգուշացէք նրանցից, որոնք մտածում են լուծել սօցիալական հարցը ընդհանուր հաւասարութեամբ ներքևից։ Ես կողմնակից եմ հաւասարութեանը մասսան բարձրացնելու ճանապարհով։

«Այն ազգերը չեն զօրեղ և մեծ, որոնք յոյս են դնում իրանց քաղաքացիներից ամենախելօքի վրա,—պետութեան խիստ հանճարեղ գլուխը յաճախ պետութեան թշնամին է լինում,—այլ նրանք, որոնց քաղաքացիների ահագին մեծամասնութիւնը հասկանում է իրանց պարտաւորութիւնները և իրանց դերը այնպէս, որպէս ես նրանց նկարագրեցի։ Հարկաւոր են ոչ թէ հանճարներ, այլ սովորական մարդու յատկութիւններ, քաղաքացու, որոնք ընդհանրապէս կարող են տալ պետութեանը՝ համարձակութիւն, ազնւութիւն, գործունէութիւն. այդպէս են լաւ քաղաքացուց պահանջվող յատկութիւնները»։

Որոշելով այդպիսով մարդու պարտաւորութիւնները իր անձի և իր ընտանիքի, նոյնպէս և որպէս քաղաքացու, որպէս պետական գործիչի վերաբերմամբ, դասախօսը անցաւ միջազգային յարաբերութիւններին։ Դասախօսութեան այդ մասը առանձին հետաքրքրութիւն ունի։

«Որպէս պետութեան մէջ իւրաքանչիւր անձն պէտք է աշխատի ընդհանուր բարօրութեան համար,—ասաց դասախօսը,—այնպէս և իւրաքանչիւր ազգ պարտաւոր է նպաստել մարդկութեան բարօրութեանը։ Դեռ համարեա գոյութիւն չունեն միջազգային օրէնքներ։ Սակայն արդարութիւնը պէտք է թագաւորէ և ազգերի յարաբերութիւնների մէջ։ Այժմ արդէն այլ ևս չէ թոյլատրվում, որ իւրաքանչիւր ազգ կարող է անել այն, ինչ որ թոյլ են տալիս նրան անելու նրա զինուորական և ծովային ոյժերը, և ամենուրեք տարածվում է այն գաղափարը, որ եթէ ճիշդ է, թէ մարդը չէ կարող ոչինչ անարդար և ապօրէն բան անել ուրիշի վերաբերմամբ կազմակերպված պետութեան մէջ, աւելի ևս ճիշդ է այն, որ ազգն ևս չէ կարող ոչինչ անարդար և վնասակար բան ձեռնարկել ուրիշ ազգերի հասցէին։

«Այդ գաղափարի զարգացումը, նրա տարածումը բոլոր շերտերի մէջ ապահովում են մարդկութեանը նրա շարժումը դէպի առաջ։ Յենվելով այն կարծիքի ոյժի վրա, որ ծնվել է այդ օրից օր արմատ բռնող գաղափարից, Բէլգիայի նման փոքրիկ ազգերը կարող են ապրել, ծաղկել և մեծացնել իրանց տնտեսական զօրութիւնը ամենազօրեղ ազգերի հետ համահաւասար, այլ երբեմն և մեծ չափով»։

Այդպէս էր խօսում Ռուզվէլտը, և ունկնդիրները ջերմ ծափահարում էին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

1 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. „Торг. Промышл. Газета"-ի մինչև ապրիլի 25-ը ստացած տեղեկութիւնների համաձայն, ցանքսերը միջին շրջանի 23 նահանգներում ներկայանում են այս կերպ. աշնանացանը լաւ է Վիտեբսկի, Կօվնայի, Գրօդնայի, Մօգիլէվի, մասամբ Մինսկի նահանգներում. լաւ են նոյնպէս Սմօլէնսկի, Չերնիգովի, Կալուգայի, Տամբովի, Սարատովի, Վօրօնէժի, Սամարայի նահանգի մեծ մասում. անբաւարար է Տուլայի նահանգում, մասամբ Ռեազանի և Կուրսկի նահանգներում. արևմտեան մասի մնացած տեղերում աշնանացանը բաւարար է։ Գարնանացանը բուսնում է լաւ, բայց է աճում չափազանց արագ։ Գարնանացանի ցանքսի շրջանը աւելացել է անցեալ տարվանից։

Օդագնացութեան 7-րդ օրը։ Սկզբում բարձրացաւ գերմանացի Վինգէրս և աջող թռիչք կատարեց 5 րոպէ 10 վայրկ.։ Իջնելիս գործիքը փչացաւ. աէրօպլանը սկսեց ընկնել ջրանցքի կողմը։ Որպէսզի փրկէ աէրօպլանը, Վինգէրսը վերստին բարձրացաւ, բայց վայր ընկաւ։ Ապա բարձրացաւ Պօպօվը Րայտի օդապարիկով։ Հէնց այն էր՝ նա առաջին շրջանն էր արել, երբ գործիքը դեռ մինչև այժմ անյայտ պատճառից սկսեց ընկնել շրջվելով օդում. շուտով վայր ընկաւ սեւտին, ձախ թևով ընկաւ ջրանցքի մէջ։ Գործիքի ձախ մասը բոլորովին փչացաւ. օդագնացը մնաց ողջ։ Խորտակվեց նաև բարօնուհի Դէլարօշի գործիքը. ինքն անվնաս է։ Ֆրանսիացի օդագնաց Մօրանը բարձրացաւ Բլէրիօյի օդապարիկով։ Չը կարողացաւ մի թռիչք կատարել նա, երբ ուժեղ քամին վայր ձգեց նրան իր օդապարիկով մի խումբ մարդկանց և ժիւրիի անդամների վրա։ Մեծամասնութիւնը կարողացաւ այս ու այն կողմը նետվել։ Գործիքի տակ ընկան պրօֆ. Միտինսկի, գնդապետներ՝ Իւենկօ և Կրիվենկօ։ Վերջինս ուժեղ հարուած ստացաւ գլխից։ Իւենկօյի ոտքերը ջարդվեցին։ Միտինսկին չը վնասվեց. Մօրանը անվնաս է։ Երկու աջող թռիչքներ կատարեց Էդմօնդը, որ օդում մնաց սկզբում 28, յետոյ 32 րոպէ և շահեց 2 մրցանակներ՝ 560 ր.։ Մթնշաղին Էդմօնդը 2 կարճատև թռիչք կատարեց բարօնուհի Դէլարօշի և իշխանուհի Դօլգօրուկօվայի հետ։

Կարմիր Խաչի ռուսական ընկերութեան գլխաւոր վարչութիւնը 10,000 ր. յատկացրեց զինւորների բժշկութեան համար հանքային ջրերում։

Ճան. հաղ. մինիստր Կօվալէվսկին թոյլատրված է ընկերութիւն կազմել Կօկանդ-Նամանգան երկաթուղագծի կառուցման համար։

ՄՕՍԿՎԱ. Այսօր յրագիրների տպարաններում աշխատանք չեղաւ։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ. Եկաւ քննիչ սենատոր Գլիշչինսկին։

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ Մ./Վ. Բացվեց մրցութեան ու խաղի միջազգային ցուցահանդէսը։

ԲԵՐԼԻՆ. Ռուսաց դեսպանատան պաշտօնեաների և ֆինանսների մինիստրութեան ներկայացուցիչների ներկայութեամբ հանդիսաւորապէս բացվեց Միացեալ բանկի բաժանմունքը։

ԻՕՀԱՆՆԻՍՏԱԼ. Օդում երկար ժամանակ թռչելու համար որոշված մրցանակը վերցրեց ֆրանսիացի Ժօնէնը, որ օդում մնաց 2 ժամ 39 րոպէ 25 վայրկեան։

2 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Լրագրական այն տեղեկութիւնը, թէ քաղաքապետը փակեց դրամատիկական և երաժշտական գրողների միութիւնը, մտացածին է և անհիմն։

Օդագնացութեան վերջին օրը անցաւ անաջող՝ քամու և անձրևի պատճառով։ Ոչ մի թռիչք չեղաւ։ Մի քանի մրցանակների հետևանքները յայտնի եղան. Պետերբուրգի մեծ մրցանակը ստանալու է Խրիստիանսը, երկրորդ մրցանակը—Պօպօվը, երրորդը—Մօրանը, չորրորդը—Էդմօնդը։ Ծովային վարչութեան մրցանակը երկար թռչելու համար կը ստանայ Պօպօվը. ուղևորի հետ թռչելու համար մրցանակ կը տրվի Խրիստիանսին։

ՕԴԵՍՍԱ. Եկաւ սենատոր Դէդիւլինը քննիչ պաշտօնեաների հետ։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ. 5 չարագործներ քաղաքագի, գրագրի և ինն պահապանների ներկայութեամբ կոտրեցին երեք արկղ և յափշտակեցին 1200 ր. անցաթղթի բլանկներ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ

Արժէթղթերի կուրսը
3 մայիսի

I կ. ներք. փոխ. խ. տոմս.	456 ր. 50 կ.
II » »	347 ր. 50 կ.
III Ազնուակ. բանկ. »	321 ր. 50 կ.
4% Պետական ռենտա	91 ր. 62½ կ.
4% Պետ. Ազնւ. բանկ գր. թ.	89 ր. 75 կ.
5½% » » » »	100 ր. 25 կ.
4% » » » »	89 ր. 75 կ.
3½% » » » »	100 ր. 25 կ.
5% Գիւղ. հող. բան. վկ.	95 ր. 75 կ.
5½% » » » »	100 ր. 37 կ.
4% » » » »	— ր. — կ.
5% Ներքին փոխառ. 1905 թ.	
I հրատ.	104 ր. 37½ կ.
5% » II հրատ.	104 ր. 37½ կ.
5% Արտաք. » 1906 »	104 ր. 25 կ.
5% » » 1908 »	104 ր. 50 կ.
4% Պետական գանձար.	— ր. — կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լօնդօն 10 ֆ. ստեր.	94 ր. 95 կ.
Բերլին 100 մարկ	— ր. — կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր. 60 կ.
Թաւրիզ 100 ղրան	19 ր. — կ.
Կ. Պօլիս 1 լիրա	8 ր. 66 կ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. Ֆ. ԲՕՂԴԱՆՕՎԱ—9½—1 ժ., պլօմբներ և արհեստական ատամներ։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. Ֆ. ԲՕՂԴԱՆՕՎԱ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—45

Բ Ժ Ի Շ Կ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՊԵԱՏԻԳՕՐՍԿ,
ուր ամառը կընդունէ հիւանդներին։
Սիֆիլիս, միզասեռական և վեներական հիւանդութիւններ։
(ե. հ. կ.) 955. 100—86

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սիմեօնօվսկայա փ. № 16.
Տելեֆօն № 40.
(ե. ու. կ.) 984. 100—84

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

14 ՏԱՐԻ Է ԱՆՅԱՅՏԱՑԵԼ Է
ամուսինս Խնուսեցի առևտրական
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
Ծանօթներին կամ տեղն իմացողներին խնդրում եմ տեղեկացնել, հսձ.—Верхніе Акулисы (Эрив. губ.), Рипсимэ Айрапетянъ МУРАДЯНЪ.
(օ. մ.) 494. 3—1

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
Թիֆլիսից 40 և 50 վ. հեռաւորութեան վրա (երկաթուղ. և խճուղ. հաղորդակցութիւն)
ԳԻՒՂԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐ
Դուշեթի գաւառում—Մչադիժվարի՝ 1523 դես. հանքերձ կալուածատիրական շինութեամբ։ Գօրու գաւառում—Օկամի՝ 120 դես. և Շեկրտուլի՝ 208 դես.։ Բօրչալուի գաւառում—Ֆախրալօ՝ 812 դես. հանքերձ շինութեամբ, Սարկինէթի՝ 1000 դես., Ֆախրալօյեան անտառը 1830 դես.—կաղնի, հաճարի և բոխի ծառերով։
Մանրամասնութիւնները և այլ տեղեկութիւնները ըստ պահանջման։
Հասցէագրել՝ С.-Петербургъ, Мойка 81. Кн. А. И. Багратіону-Мухранскому.
(ե. ու.) 465. 3—3

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԽԱՂ
1910 թ. ընթացքում կը լինի 5 տիրաժ։ Իւրաքանչիւր տիրաժում տարած գլխաւոր գումարը 1,000,000։ Մանրամասն տեղեկութ. դիմել պէտք է Ֆրի—БЕРНАРЪ и К-о, ПАРИЖЪ. Севастопольскій Бульв., 30 Գին և հասցէագրել կարելի է ուսեբրէն։ Երաշխաւոր նամակների կցցնել բացիկներ—4 կ., փակին—10 կ. մարկա։
(27 1,4,8) (В. 29209) 449. 4—3

№4870.
BESTE ALBERT SACHS'S SCHUH-CREAM
BRISTOL

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ
КОЛОССАЛЬНЫЙ
успѣхъ сапожн. крема
„БРИСТОЛЬ"
СОБЛАЗНЯЕТЪ поддѣлывателей.
ВНИМАНІЕ!
Настоящій только № 4870.
Альбертъ Заксъ
КОНТОРА: СПБ., Англ. пр. 46 телеф. 321—07.
РОЗН. МАГ.: Казанская 6, телеф. 264—92.
(П. 42934) 446. 10—4

Թիֆլիսի Առևտրական Դպրոցի Վերատեսուչը
յայտարարում է, որ ընդունելութեան քննութիւնները միջին և աւագ պատրաստ. բաժանմունքների, նոյնպէս I և III դասարանների համար տեղի կունենան մայիսի 20-ին և 21-ին։
Խնդիրները՝ դօկումենտների հետ միասին՝ ընդունվում են դպրոցի գրասենեակում լի օրերը՝ առ. ժամը 9-ից մինչև 1-ը ցեր.։
Պատրաստական կրտսեր բաժանմունքն ընդունվում են առանց քննութեան 7—9 տարեկան երեխաներ։
Քննութիւնների սկիզբը առաւօտեան ժամը 8½-ին։
502. 1—1

ОТКРЫТА ПОДПИСКА
на новый
САМЫЙ ДЕШЕВЫЙ ВЪ РОССІИ
Ежемѣсячный иллюстрированный, литературный и научно-популярный
ЖУРНАЛЪ
„ИСКРЫ ЖИЗНИ".

Въ журналѣ кромѣ литературнаго отдѣла будутъ широко поставлены отдѣлы педагогическій, политико-экономическіи, библіографій, искусства и провинціальной жизни, а также будутъ печататься научно-популярныя статьи по всѣмъ отраслямъ знанія, будутъ даваться обзоры женскаго, рабочаго и кооперативнаго движенія въ Россіи и заграницей.

Журналъ будетъ иллюстрированъ снимками съ картинъ извѣстныхъ художниковъ, портретами современыхъ дѣятелей, рисунками текущихъ событій и т. п., также въ видѣ приложенія будутъ даны ноты.

Приступая къ изданію журнала „Искры Жизни" редакція ставитъ своею цѣлью дать, за самую минимальную подписную плату, дѣйствительно серьезный и интересный журналъ для семьи, учащихся, трудовой интеллигенціи, крестьянъ и рабочихъ.

Въ журналѣ примутъ участіе видные литераторы, публицисты, ученые и художники.

Подписная цѣна
75 КОП. на годъ за 12 №№ съ доставкой и пересылкой 75 КОП.
на другіе сроки подписка не принимается.
Подписка принимается въ редакціи журнала С.-Петербургъ, Вас. остр. 5 линія, д. № 46, кв. № 12.
(ե. շ.) 486. 2—1

Типографія „Экономія" Большая Ванкская № 3.